

Հավելված

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ ՀՀ-ի դեմ կայացված վճիռների ամփոփ նկարագիրը

	Գործը	Վճռի կայացման ամսաթիվ	Հղումը	Փաստերը/գործի նկարագրություն	Խախտում
1.	Շուրխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի	31.04.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-112501%22%5D%7D	Վ.Շուրխովը 1971թ. մայիսին Երևանի Մսի կոմբինատում աշխատելիս ստացել է ողնաշարի կոտրվածք: Ստացել է առաջին կարգի հաշմանդամություն: 1972թ. փետրվարի 25-ին կոմբինատի ղեկավարությունը դիմումատուին նշանակել է ցմահ ամսական վճարումներ: 1992թ. հունվարից ի վեր կոմբինատը դադարեցրել է դիմումատուի ամսական վճարումները: 1973թ. նոյեմբերի 20-ին Քիշնևի Լենինի շրջանի դատարանը Կոմբինատին պարտավորեցրել է փոխհատուցել ինամքի ծախսերը: 1974թ. հունվարի 16-ին Մոլդովիայի ԽՍՀ գերագույն դատարանի քաղաքացիական պալատը փոփոխել է այդ վճիռը՝ նվազեցնելով նշանակված փոխհատուցման գումարները: Դիմումատուն, այնուհետև, ձեռք է բերել ցմահ հաշմանդամության կարգավիճակ՝ աշխատունակության 100% կորստով: 1980-ական թվականների վերջերին դիմումատուն կոմբինատի դեմ հայց է ներկայացրել՝ պահանջելով լրացուցիչ բուժօգնության և հավելյալ սննդի համար լրացուցիչ փոխհատուցում եւ Օրջոնոկիձեի շրջանի ժողդատարանը բավարարել է դիմումատուի պահանջները: 1995թ. հունիսի 14-ին կոմբինատը վերակազմակերպվել է «Ուրարտու» ԲԲԸ-ի, իսկ 1997թ. հունվարի 14-ին ճանաչվել է սնանկ: 1997թ. ապրիլի 28-ին ընկերությունը հանվել է աճուրդի, վաճառվել և ազատվել որևէ պարտքի վճարումից: Դիմումատուն հայց է ներկայացրել վճռի ճանաչման և կատարման վերաբերյալ: 2004թ. մարտի 4-ին Էրեբունի և Նուբարաշեն վարչական	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

				շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է դիմումատուի պահանջը՝ ճանաչելով 2003թ. վճիռը և պահանջելով կատարել այն: 2004թ. ապրիլի 23-ին ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի պահանջը: Դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը 2004թ. սեպտեմբերի 17-ին մերժվել է՝ չհիմնավորված լինելու պատճառով:	
2.	Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի	12.04.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-111416%22%7D%7D	Արմեն Պողոսյանը մեղադրվել է մանկահասակ երեխայի բռնաբարության և սպանության համար և դատապարտվել էր ազատազրկման 15 տարի ժամկետով, 5,5 տարվա ազատազրկումից հետո ազատ էր արձակվել, քանի որ պարզվել էր, որ նա չի կատարել մեղսագրվող արարքը: Տարիներ շարունակ Ա. Պողոսյանը բողոքել էր զխավոր դատախազին, երկրի նախագահին, որ ինքը չի կատարել տվյալ հանցագործությունը, սակայն նրան չէին հավատացել մինչ այն պահը, երբ իրական հանցագործը խոստովանել էր իր կատարած հանցանքի մասին: Արմեն Պողոսյանը և նրա մայրը՝ տիկին Բաղդասարյանը, Եվրոպական դատարանից պահանջել էին բարոյական վնասի հատուցում ինչը ներպետական դատարանները մերժել էին:	13-րդ հոդվածի, 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածի խախտում:
3.	Հարությունյանն ընդդեմ Հայաստանի	28.06.2007	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-81352%22%7D%7D	1998 թվականի հունիսին Դիմումատուն գորակոչվել է ՀՀ զինված ուժեր և ծառայությունն անցկացրել սահմանամերձ գոտում: 1999 թվականի ապրիլին նրան առաջադրվել է մեղադրանք՝ զինծառայողի սպանության հիմքով: Նա դատապարտվել է կանխամտածված սպանության համար յոթ տարվա ազատազրկման: Նախաքննության ընթացքում նա և երկու վկաներ ենթարկվել են խոշտանգումների, որը բացահայտվել է և խոշտանգումներ իրականացրած ոստիկանները դատապարտվել են: Ազգային դատարանները խոշտանգումով ստացված ապացույցները՝ Մ. Հարությունյանի ինքնախոստովանական ցուցմունքները և երկու վկաների ցուցմունքները չեն հանել գործի նյութերից, այլ դրանք, ի թիվս այլ, օրինական հիմքերով ստացված ապացույցների, օգտագործել են Դիմումատուի մեղքը հաստատելու և նրան դատապարտելու համար:	6-րդ հոդվածի խախտում:
4.	Խաչատրյանն ընդդեմ	01.12.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-111416%22%7D%7D	Միխայել և Էյանորա Խաչատրյանները ամուսիններ են, ովքեր աշխատել են «Հրազդանամաշ» փակ բաժնետիրական ընկերությունում:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

	Հայաստանի		2:[%22document%22], %22itemid%22:[%22001-95905%22]}	<p>1998- 2000թթ.-ին ընկերությունը չի վճարել աշխատավարձեր և կարգադրել է անձնակազմի մեծամասնությանը, ներառյալ նաև Խաչատրյան ամուսիններին, անորոշ ժամկետով իրենց հաշվին արձակուրդ գնալ: 17.05.2001թ.-ին արհմիությունը չվճարված աշխատավարձը և այլ օգուտները բռնագանձելու նպատակով անձնակազմի անունից «Հրագդանմաշ»- ի դեմ հայց է հարուցել Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան: 02.07.2001թ.-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցը և կարգադրել, որ «Հրագդանմաշ»-ը վճարի 58,060,925 ՀՀ դրամ՝ ներառյալ 211,864.51 և 221,157.08 ՀՀ դրամ գումարներ՝ համապատասխանաբար Միխայել Խաչատրյանին և Էլյանորա Խաչատրյանին: Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք չի բերվել, և որոշումը մտել է ուժի մեջ ու դարձել վերջնական: Հետագայում, ԴԱՀԿ-ը մի քանի անգամ վերսկսել ու կասեցրել է վճարի կատարման վարույթը, որը կապված էր հիմնականում այն հանգամանքի հետ, որ ՀՀ կառավարությունը որոշել էր սեփականաշնորհել ընկերությունը և այդ նպատակով հրահանգել էր վաճառքից ստացված գումարը հանձնել պետական բյուջե՝ ընկերության պարտքերը մարելու նպատակով: 05.01.2004թ.-ին Խաչատրյանները ԴԱՀԿ-ի անգործությունը վիճարկել են Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան: Դատարանը մերժել է հայցը և իր որոշումը հիմնավորել հետևյալ կերպ. «... կատարողական վարույթը Կոտայքի մարզի ԴԱՀԿ բաժնի կողմից կասեցվել է ՀՀ կառավարության 27.03.2003թ. թիվ 329-Ս որոշման հիման վրա: Համաձայն ՀՀ ԴԱՀԿ մասին օրենքի 38 հոդ. հարկադիր կատարողն իրավունք ունի կասեցնել կատարողական վարույթը, եթե պարտապանը ներգրավվել է որևէ պետական հանձնարարության մեջ, ուստի ԴԱՀԿ բաժնի գործողությունները օրինական են և հիմնավորված»: Խաչատրյանների վերաքննիչ և վճարեկ բողոքները նույնպես մերժվել են: Արդյունքում, 2001 թվականին օրինական ուժի մեջ մտած դատական վճիռը մնացել է անկատար:</p>	<p>1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:</p>
5.	Բուխարատյանն ընդդեմ Հայաստանի	10.01.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:[%22document%22],	<p>Դիմումատուն «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամ է: 1998թ. հրաժարվել է բանակ գնալ՝ իր դավանանքի պատճառով: Այնուհետև ժամանակավոր հեռացել է տնից՝ բռնի</p>	<p>9-րդ հոդվածի խախտում:</p>

			%22itemid%22:[%22001-108502%22]}	ուժով բանակ տանելու մտավախությունից ելնելով: Նրա դեմ քրեական գործ է հարուցվել 2002 թ: 2003 թ. ազատագրկվել է 2 տարով, սակայն վաղաժամկետ ազատվել է՝ պատիժը կրելով ընդամենը 6 ամիս:	
6.	Սադաթեյանն ընդդեմ Հայաստանի	08.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-205231%22]}	Գործը վերաբերում է ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի խախտմանը: Դիմումատուի գործի քննությունը 3 ատյաններում տևել է 12 տարի, 7 ամիս, 24 օր: Գործի քննության սկիզբ՝ 01.03.2000թ.:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
7.	Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի	27.10.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-167762%22]}	2000 թվականի հոկտեմբերի 7-ին Ղազախստանի Կոստանայ քաղաքի սրճարաններից մեկում մի միջոցառման ժամանակ Ս.Մ-ն դանակահարվել է երկու անձանց կողմից: Նա մահացել է հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին: Դիմումատուն Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտվել է Ղազախստանի Հանրապետության տարածքում սպանություն կատարելու համար, որտեղ քրեական գործի նախաքննությունը կատարվել է առանց դիմումատուի մասնակցության: Սպանությունը կատարվել է հասարակական վայրում միջոցառման ժամանակ՝ մի շարք անձանց ներկայությամբ: Այս անձինք, մասնավորապես՝ Խ.Հ-ն, Գ.Թ-ն, Օ.Դ-ն, Վ.Հ-ն և Գ.Ա-ն, Ղազախստանի Հանրապետությունում գործով վարույթի ընթացքում հարցաքննության ժամանակ դիմումատուին և Բ.Մ-ին մատնանշել են որպես տուժողին դանակով հարվածողների: Մյուս ականատեսները, մասնավորապես՝ Ա.Օ-ն, Ա.Գ-ն, Վ.Կ-ն, Լ.Տ-ն և Ե.Բ-ն, որոնք նույնպես հարցաքննվել են Ղազախստանի Հանրապետության քննչական մարմինների կողմից, տեղի ունեցածը նկարագրել են առանց դիմումատուին մատնանշելու՝ որպես արարքը ենթադրաբար կատարողի, մինչդեռ Լ.Տ-ն ճանաչել է նրան, երբ իրեն ցույց են տվել նրա լուսանկարը: Դատարանը նաև նշել է, որ այդ տասնմեկ վկաներից ոչ մեկը չի ներկայացել դիմումատուի դատական քննությանը: անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատուի՝ այն վկաներին հարցաքննելու իրավունքը, որոնց վկայությունները վճռորոշ դեր են ունեցել իր դատապարտման հարցում: Այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ՝ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից զրկվելու առնչությամբ: 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ տեսաերկվները չհետազոտելու առնչությամբ:

				առաջին ատյանի դատարանը չի հետազոտել տեսաերիզները՝ այդ ապացույցն անձամբ գնահատելու համար, չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ մրցակցության սկզբունքի հիման վրա իրականացվող դատավարության պահանջներին՝ հաշվի առնելով, որ պաշտպանության կողմն ի վերջո զրկվել է այդ ապացույցը մեկնաբանելու բոլոր հնարավորություններից:	
8.	Նիկողոսյանն ու Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի	06.12.2007	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-83884%22%7D%7D	2000 թ. Դիմումատուներ Մելքոնյանը և Նիկողոսյանն Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանում որպես պատասխանողներ ներգրավված են եղել քաղաքացիական գործով դատական վարույթում, որի շրջանակներում հայցվորները պահանջել են չեղյալ հայտարարել դիմումատուների հետ կնքած առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցման վկայականը: 2003թ.-ի ապրիլի 25-ին Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանը բավարարել է հայցվորի պահանջները և չեղյալ է հայտարարել նշված փաստաթղթերը: Մելքոնյանն ու Նիկողոսյանը բողոքարկել են վճիռը: 2003թ.-ի մայիսի 30-ին ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը ծանուցագիր է ուղարկել երկու դիմումատուներին՝ նրանց տեղեկացնելով, որ գործի վերաքննիչ բողոքի վերաբերյալ նիստը տեղի կունենա 2003թ.-ի հունիս 10-ին, ժամը՝ 11:00-ին, Երևանում: 2003թ.-ի հունիսի 10-ին Քաղաքացիական վերաքննիչ դատարանը որոշել է ուժի մեջ թողնել 2003թ.-ի ապրիլի 25-ի վճիռը: Պատասխանողի ներկայացուցիչը ներկա էր գտնվում նիստին և ներկայացրել էր իր բանավոր փաստարկները և բացատրությունները, իսկ դիմողները ներկա չեն եղել նիստին: Դատական նիստը բացելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ դիմողներն անձամբ ստացել են դատական նիստի մասին ծանուցագիրը, սակայն դատարան չեն ներկայացել: Նիկողոսյանն ու Մելքոնյանը բողոքարկել են Վճռաբեկ դատարան, նշելով, ի թիվս այլ պնդումների, որ պատշաճ ծանուցված չեն եղել դատական նիստի մասին և այդ պատճառով հնարավորություն չեն ունեցել ներկա գտնվել նիստին ու ներկայացնել փաստարկներ: Նրանք պնդել են, որ ծանուցագրերը նրանց են հանձնվել միայն 2003թ.-ի հունիսի 17-ին, ինչը հաստատվում է նաև համապատասխան ծրարով, որի վրա դրված	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ չի հարգվել կողմերի հավասարության սկզբունքը:

				կնիքը վկայում էր, որ ծրարը ստացվել էր հունիսի 17-ին: 2003թ.-ի սեպտեմբերի 26-ին Վճռաբեկ դատարանը, կողմերի բացակայությամբ, քննել ու մերժել է բողոքը և ուժի մեջ է թողել Վերաքննիչ դատարանի վճիռը: Վճռաբեկ դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել 2003թ.-ի հունիս 10-ի նիստին դիմումատուների բացակայության հարցին:	
9.	«Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի	20.12.2007	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-84119%22%5D%7D	2001թվականի հունվարի 29-ին Հարկային պետական ծառայությունը ստուգումներ է կատարել «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ում, որի հիման վրա 2001թ.-ի ապրիլի 2-ին ՀՀ պետական եկամուտների նախարարությունը կատարել է գնահատում, ըստ գնահատման՝ ընկերության հարկային պարտքը կազմել է 3,797,281 ՀՀ դրամ ներառյալ համապատասխան հարկային օրենքներով սահմանված տույժերը և տուգանքները: Երևան քաղաքի դատախազությունը և Երևանի Մյասնիկյանի տարածքային հարկային տեսչությունը հայց են ներկայացրել ընկերության նշված հարկային պարտքի գումարը բռնագանձելու նպատակով: 2001թ.-ի հուլիսի 13-ին առաջին ասյանի դատարանը վճիռ է կայացրել ընկերության դեմ: Ընկերությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան: Ընկերությունը խնդրել է նաև դատարանի պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգել: 2001թ.-ի օգոստոսի 31-ին ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարանը բավարարել է ընկերության՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու միջնորդությունը և վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ: 2001թ.-ի դեկտեմբերի 24-ին ՀՀ տնտեսական դատարանը դատախազի դիմումի հիման վրա որոշել է հայցի բավարարման միջոց կիրառել՝ արգելանք դնելով ընկերության գույքի ու դրամական միջոցների վրա 3,797,281 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց՝ փորձելով անօրինական ճանաչել 2001թ.-ի ապրիլի 2-ի որոշումը: Դիմումատու ընկերությունը դիմել է պետական տուրքի վճարումը նույն հիմքով հետաձգելու խնդրանքով: 2002թ.-ի հունվարի 18-ին դատարանը բավարարել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին դիմումատու ընկերության միջնորդությունը և վարույթ է ընդունել ընկերության հակընդդեմ հայցը: 2003թ.-ի հունվարի 20-ին ՀՀ տնտեսական դատարանը բավարարել է	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ դիմումատու ընկերությունը զրկված է եղել դատարանի մատչելիությունից:

				<p>իշխանությունների հայքը և մերժել դիմումատու ընկերության հայքը: 2003թ.-ի փետրվարի 3-ին ընկերությունը ներկայացրել է վճարել բողոք, որի հետ մեկտեղ միջնորդել է հետաձգել պետական տուրքի վճարումը՝ պնդելով, որ ընկերությունն ունի ֆինանսական խնդիրներ, մասնավորապես, որ իր բանկային հաշվին ունի միայն 770 ՀՀ դրամ: 2003թ.-ի փետրվարի 14-ի նամակով ՀՀ վճարել դատարանը տեղեկացրել է ընկերությանը, որ վերջինիս վճարել բողոքը քննության է առնվելու 2003թ.-ի փետրվարի 28-ին, սակայն նամակում նշվել է, որ բողոքը կթողնվի առանց քննության, եթե մինչև 2003թ.-ի փետրվարի 24-ը ընկերությունը չվճարի պետական տուրքը: 2003թ.-ի փետրվարի 27-ի նամակով ՀՀ վճարել դատարանը վերադարձրել է ընկերության վճարել բողոքը պետական տուրքը վճարված չլինելու պատճառաբանությամբ:</p>	
10.	Բայաթյանն ընդդեմ Հայաստանի	27.10.2009	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-95386%22%7D%7D</p>	<p>Վահան Բայաթյանը հրաժարվել է ծառայել բանակում՝ պատճառաբանելով, որ հանդիսանում է Եհովայի վկա և իր հավատքն արգելում է ծառայել զինված ուժերում: 2001 թվականի հոկտեմբերին նրան առաջադրվել է մեղադրանք, իսկ 2002 թվականի հոկտեմբերին նա դատապարտվել է մեկ տարի և վեց ամսվա ազատազրկման, որն ավելի ուշ Վերաքննիչ դատարանի կողմից խստացվել է մինչև երկու և կես տարվա ազատազրկման: 2003 թվականի հուլիսին պատիժը կրելուց տաս ու կես ամիս անց Վ. Բայաթյանը պայմանական վաղաժամկետ ազատվել է բանտարկությունից: Եվրոպական դատարանում վիճարկում էր, որ իրեն դատապարտելը հանդիսացել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված հավատքի և խղճի ազատության իրավունքի միջամտություն և խախտում: Թեև Կոնվենցիան ուղղակիորեն չի երաշխավորում հավատքի և խղճի ազատության իրավունքի հիմքով ազգային բանակում ծառայելուց հրաժարվելու նյութական իրավունք, սակայն իրավունքը զարգանում է, և հնարավոր է, որ Կոնվենցիան մեկնաբանվի ներկա իրողությունների լույսի ներքո: Արձանագրվի, որ Կոնվենցիան երաշխավորում է նման նյութական իրավունք, քանի որ ԵԽ անդամ պետությունների մեծամասնությունում նման նյութական իրավունք ներպետական իրավունքում սահմանվել է:</p>	<p>9-րդ հոդվածի խախտում:</p> <p>07.01.2011 թ. կայացված վճռով Մեծ պալատը վերանայել է նշված վճիռը՝ արձանագրելով, որ խախտում առկա չէ:</p> <p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-105611%22%7D%7D</p>

11.	Անահիտ Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի	07.05.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-202212%22%5D%7D	<p>Գործը վերաբերում է Դիմումատուի որդու մահվան հանգամանքների արդյունավետ և անհապաղ հետաքննություն չիրականացնելուն: Իշխանություններն արդյունավետ և մանրակրկիտ քննություն չեն իրականացրել Արայիկ Ավետիսյանի մահվան դեպքի առթիվ:</p> <p>2001 թվականի հոկտեմբերի 30-ին Անահիտ Մկրտչյանի որդին մահացել է իր գումարտակի հրամանատարի գրասենյակում գլխին ստացված հրազենային վնասվածքից: ՄԻԵԴ-ը նշել է, որ սույն գործով հետաքննությունը սկսվել է 2001 թվականին և դեռ չի ավարտվել, քրեական գործի վարույթը մի քանի անգամ կասեցվել է, ինչի պատճառով դեռևս անհնար է պարզել Դիմումատուի որդու մահվան ճշգրիտ հանգամանքները, որոնք, ըստ պաշտոնական վարկածի, տեղի են ունեցել առնվազն երեք վկաների ներկայությամբ: Դատարանն ընդունել է քննչական աշխատանքների գործնական դժվարությունները, ինչպիսիք են՝ վկաների հակասական ցուցմունքները և փորձաքննության եզրակացությունները, այնուամենայնիվ, նշել է, որ վկաների ցուցմունքների վրա ազդող հանգամանքները, կրկնվող դատական որոշումները, գործը դատախազին ուղարկելը և հետաքննող մարմինների կողմից թույլ տրված սխալները վկայում են պատասխանող Պետության դատական համակարգում աշխատանքի լուրջ թերությունների առկայության մասին: Իշխանություններն արդյունավետ և մանրակրկիտ քննություն չեն իրականացրել Արայիկ Ավետիսյանի մահվան դեպքի առթիվ:</p>	2-րդ հոդվածի խախտում:
12.	Ասատրյանն ընդդեմ Հայաստանի	27.04.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-173089%22%5D%7D	<p>2001 թվականի դեկտեմբերի 29-ին Մ.Գ.-ի մեքենայի տակ տեղադրված ռումբը պայթել է, երբ վերջինս առավոտյան գործի է գցել շարժիչը: Մ.Գ.-ն ողջ է մնացել՝ առանց լուրջ վնասվածքների: Նույն օրը վարչական շրջանի դատախազությունում սկսվել է գործի քննությունը:</p> <p>Դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել Մ.Գ.-ի նկատմամբ սպանության փորձ կատարելու մեջ: Դատարանը հաստատել է, որ նա Մ.Գ.-ին սպանելու շարժառիթ է ունեցել, քանի որ բիզնեսի առնչությամբ Մ.Գ.-ի և իր նախկին ամուսնու՝ Ա.Գ.-ի միջև ծագած վեճի մեջ նա իր գույքային շահն է ունեցել: Դիմումատուի այն արդարացումը, որ ինքը Ա.Գ.-ի հետ 1999 թվականին իրենց ամուսնալուծությունից ի վեր որևէ կապ չի ունեցել, հերքվել է այն</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

				<p>փաստով, որ նա իր նախկին ամուսնու հետ ներգրավված է եղել Մ.Գ.-ի հետ նրա գույքային վեճերում: Վարչական շրջանի դատարանի դատավճռի մեջ նշված ապացույցներից բացի, Վերաքննիչ դատարանը հիմնվել է վկաներ Ա.Աթ.-ի, Լ.Գ.-ի, Ա.Ա.-ի և Ա.Բ.-ի նախաքննական ցուցմունքների վրա և եկել է այն եզրահանգման, որ դիմումատուի՝ դատական քննության ժամանակ և իր վերաքննիչ բողոքում ներկայացրած արդարացումն արժանահավատ չէ:</p>	
13.	Թեյնուրազյան և ընդդեմ Հայաստանի	15.03.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-181598%22%7D%7D	<p>Ներքին օրենսդրությամբ սահմանված դաժան վերաբերմունքի և ապօրինի կալանքի հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի հնարավորությունների բացակայություն: 1983 և 1988 թվականներին դիմումատուն մեղավոր է ճանաչվել անչափահասների նկատմամբ ոտնձգություններ կատարելու համար և դատապարտվել ազատազրկման: 2001 թվականից ի վեր դիմումատուն պետության դեմ ներկայացրել է երկու քաղաքացիական հայց՝ իր երկու դատապարտումների հետևանքով կրած նյութական վնասի դիմաց փոխհատուցում ստանալու պահանջով: Այս հայցերը բավարարվել են 2001 թվականի սեպտեմբերի 10-ին և 2005 թվականի օգոստոսի 26-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի կողմից, որը որոշել է դիմումատուին՝ որպես արդարացվածի, տրամադրել գումարներ որպես փոխհատուցում՝ բաց թողնված եկամտի, իր վնասված առողջության վերականգնման համար կրած բժշկական ծախսերի դիմաց, իր հետագա բուժումն արտասահմանում կազմակերպելու և այդ առնչությամբ առաջացող ճանապարհածախսի համար:</p>	<p>5-րդ հոդվածի 5-րդ կետ, 13-րդ հոդվածի խախտում:</p>
14.	Դավթյանն ընդդեմ Հայաստանի	31.03.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-153350%22%7D%7D	<p>Պաշտպանություն վատ վերաբերմունքից / կալանքի պայմաններից: Անձի նկատմամբ կալանքի շարունակական երկարացման անհիմն լինելը և դրա արդյունքում անհրաժեշտ բժշկական օգնություն չտրամադրելը: 2002 թվականի մարտի 19-ին դատախազը քրեական գործ է հարուցել նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Բանկի նախկին կառավարչի կողմից իր պաշտոնեական դիրքի չարաշահման միջոցով մեկ այլ ընկերության կողմից 2001 թվականի հունիսին Բանկին վստահված ֆինանսական միջոցների յուրացման</p>	<p>3-րդ հոդվածի խախտում:</p>

				<p>հատկանիշներով:</p> <p>2003 թվականի ապրիլի 1-ին դիմումատուի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել նախկին ՔՕ-ի 90-րդ հոդվածի 4-րդ մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 187-րդ հոդվածով՝ իր պաշտոնական դիրքը չարաշահելու և որպես գործադիր տնօրեն 1997-1999թթ. իր պաշտոնավարման ընթացքում կեղծ հաշվապահական փաստաթղթերի պատրաստման ու օգտագործման միջոցով յուրացման հիմքով՝ Բանկին և դրա հաճախորդներին վնաս պատճառելով: Պարզվել է, որ 10 այլ անձանց նկատմամբ ևս մեղադրանք է առաջադրվել այս կամ սրա հետ կապված այլ հանցագործությունների կատարման մեջ ներգրավվածության համար: Նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է դիմումատուի նկատմամբ երկու ամիս ժամկետով նախնական կալանք ընտրելու մասին քննիչի միջնորդությունը: Դիմումատուն պնդեց, որ դատական նիստի ընթացքում իր փաստաբանը դատարանին միջնորդել է կալանքը որպես խափանման միջոց չկիրառել՝ հաշվի առնելով դիմումատուի առողջական վատ վիճակը: Դիմումատուի կալանքի ժամկետն այնուհետև երկարացվել է վարչական շրջանի դատարանի կողմից երկու անգամ՝ մինչև 2003 թվականի օգոստոսի 31-ը:</p>	
15.	«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի	17.06.2008	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-87003%22%5D%7D	<p>1991 թվականին «Մելտեքս» ՍՊԸ-ն հիմնադրել է «Ա1+» հեռուստաընկերությունը, որը համարվում է առաջին անկախ հեռուստաընկերությունը Հայաստանի Հանրապետությունում: Մինչև 2002 թվականը գործել է թիվ 37 հաճախականության տիրույթում՝ հեռարձակման արտոնագրի հիման վրա: 2002 թվականի ապրիլին ընկերությունը զրկվել է արտոնագրից, քանի որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կազմակերպած մրցույթում պարտվել է մրցակից ընկերությանը: 2003 թվականի ընթացքում ընկերությունը մասնակցել է յոթ լիցենզավորման մրցույթների տարբեր հաճախականության տիրույթներում, սակայն բոլոր մրցույթներում ՀՌԱՀ-ի որոշումներով համարվել է պարտված: Բոլոր մրցույթներում ՀՌԱՀ-ը հրաժարվել է ընկերությանը տրամադրել լիցենզիայի դիմումները մերժելու մասին առանձին որոշումներ: ՀՌԱՀ-ը բավարարվել է միայն հաղթող կազմակերպության</p>	10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված օրինականության պահանջի խախտում:

				վերաբերյալ կայացրած իր որոշման պատճենն ընկերությանը ուղարկելով՝ պատճառաբանելով, որ այդ որոշումը միաժամանակ հանդիսանում է նաև լիցենզիան մերժելու մասին որոշում, որի մեջ, սակայն որևէ պատճառաբանություն չի տրամադրվել: Ընկերությունը ներպետական դատարաններում վիճարկել է մրցույթի անցկացման օրինականության հետ կապված բազմաթիվ հարցեր, այդ թվում նաև որոշումները չպատճառաբանելու ՀՌԱՀ-ի պրակտիկայի օրինականության հարցը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքերով: Ընկերության բոլոր դիմումները մերժվել են դատարանների կողմից:	
16.	Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի	11.01.2007	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-78954%22%5D%7D	Դիմումատուն հանդիսացել է «Հանրապետություն» կուսակցության անդամ: 2002թ.-ի մայիսի 14-ին մասնակցել է Ազատության հրապարակում անցկացված հանրահավաքին: Հանրահավաքից հետո Ա. Մկրտչյանը կոչ է արել մասնակիցներին Բաղրամյան պողոտայով քայլարշավ կատարել դեպի Ազգային ժողովի շենք: Հանրահավաքի մասնակիցները շարժվել են նրա հետևից պողոտայով վեր: Նույն օրը՝ ժամը 23:10-ին, Ա. Մկրտչյանը ձերբակալվել և բերման է ենթարկվել ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի Արաբկիրի բաժին: Ոստիկանության աշխատակիցների կողմից կազմված վարչական իրավախախտման արձանագրությունում նշվել է, որ Ա. Մկրտչյանը «չարտոնված երթ է կազմակերպել և խախտել է փողոցային երթերի և ցույցերի անցկացման կարգը»: 2002թ.-ի մայիսի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը նրա նկատմամբ նշանակել է վարչական տույժ 500 ՀՀ դրամ տուգանքի ձևով՝ ՎԻՎՕի 180.1-րդ հոդվածի հիմքով, որով սահմանված էր վարչական պատասխանատվություն «Հավաքների, ժողովների, երթերի և ցույցերի անցկացման սահմանված կարգի» խախտման համար: Վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը, իսկ Վճռաբեկ դատարանը նամակով սեղեկացրել է, որ օրենսդրությունը նրան որոշումը բողոքարկելու իրավունք չի ընձեռում:	11-րդ հոդվածի խախտում:
17.	Մուրադխանյ	05.06.2012	https://hudoc.echr.coe.i	2002 թվականի հունիսի 24-ին հարուցված քրեական գործով	5-րդ հոդվածի 1-ին

անն ընդդեմ Հայաստանի		nt/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-111272%22}}	<p>դիմումատուին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով, այդ թվում նաև՝ սպանության համար: 2004թ. մայիսի 18-ին դիմումատուն քննիչի միջնորդությամբ կալանավորվել է երկու ամիս ժամկետով: Այնուհետև, 20014թ. հուլիսի 12-ի որոշմամբ նրա կալանքը երկարացվել է երկու ամիս ժամկետով: Նախաքննության ավարտից և դիմումատուի գործը դատական քննության փոխանցելուց հետո՝ 2004թ. հոկտեմբերի 6-ին, առաջին աստիճանի դատարանն իր նախաձեռնությամբ և քր. դատ. օր. 293-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով երկարաձգել է կալանքի ժամկետը: 2005թ. հոկտեմբերի 14-ին գործը քննող դատարանը որոշել է գործն ուղաքրելել լրացուցիչ նախաքննության: Նույն որոշմամբ դատարանը որոշել է դիմումատուին պահել կալանքի տակ: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները վերոնշյալ որոշումը թողել են ուժի մեջ: 2005թ. դեկտեմբերի 26-ին գործի նյութերն ուղարկվել են գլխավոր դատախազություն և 2005թ. դեկտեմբերի 27-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել կալանքի ժամկետը երկու ամսով երկարաձգելու համար, որը 2005թ. դեկտեմբերի 29-ին դատարանի կողմից բավարարվել է:</p>	<p>և 3-րդ կետերի խախտում: Արձանագրվել է, որ դատարանների կողմից կալանքի միջնորդություններ ի բավարարումը տեղի է ունեցել կալանքի հիմքերի վերացական և կարծրատիպային ձևակերպումներով, ինչի արդյունքում բացահայտված չեն քննությունից թաքնվելու և գործով անցնող այլ անձանց վրա ճնշում գործադրելու իրական հանգամանքները: Բացի այդ, նախաքննությունը ջանասիրաբար չի իրականացվել, ինչի արդյունքում ներպետական դատարանի կողմից գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելուց հետո շուրջ մեկ և կես</p>
----------------------	--	---	---	---

					տարի դարձյալ իրականացվել է նախաքննություն՝ անհարկի կալանքի տակ պահելով քաղաքացուն:
18.	Երանույանն ու այլոք ընդդեմ Հայաստանի	20.07.2010	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-100026%22%5D%7D	Դիմումատուները բնակվել են Երևանի Բյուզանդի 15 հասցեում: Բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է իրենց ազգականին, նրանք բնակվել են օգտագործման իրավունքով: 2002թ. օգոստոսի 1-ին Կառավարության 1151-Ն որոշումով տարածքը համարվել է օտարման գոտի քաղաքաշինության նպատակով: 2004թ. հունիսի 17-ին Կառուցապատողը ծանուցել է դիմողներին կառավարության որոշման մասին և առաջարկել է ընտանիքի յուրաքանչյուր անդամին 2000 ԱՄՆ դոլաչին համարժեք փոխհատուցում: Դիմումատուները հրաժարվել են առաջարկությունից: 30.06.2005թ.-ին առաջին ատյանի դատարանը բավարարել է կառուցապատող ընկերության դիմումը դիմումատուների սեփականության և օգտագործման իրավունքը դադարեցնելու և նրանց տարածքից վտարելու մասին: Որոշումը ուժի մեջ է թողնվել նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից:	1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
19.	Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի	20.07.2010	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-100024%22%5D%7D միայն փոխհատուցում՝ https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-107442%22%5D%7D	Դիմումատուները բնակվել են Երևանի Բյուզանդի 17 հասցեում: Բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է իրենց ազգականին, նրանք բնակվել են օգտագործման իրավունքով: 2002թ. օգոստոսի 1-ին Կառավարության 1151-Ն որոշումով տարածքը համարվել է օտարման գոտի քաղաքաշինության նպատակով: 2004թ. հունիսի 17-ին Կառուցապատողը ծանուցել է դիմողներին կառավարության որոշման մասին և առաջարկել է ընտանիքի յուրաքանչյուր անդամին 3,500 ԱՄՆ դոլաչին համարժեք փոխհատուցում: Դիմումատուները հրաժարվել են առաջարկությունից: 30.06.2005թ.-ին առաջին ատյանի դատարանը բավարարել է կառուցապատող ընկերության դիմումը դիմումատուների սեփականության և օգտագործման իրավունքը դադարեցնելու և նրանց տարածքից վտարելու մասին: Որոշումը ուժի	1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				մեջ է թողնվել նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից:	
20.	Մուրադյանն ընդդեմ Հայաստանի	24.11.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22:%7B%22itemid%22:%7B%22001-168852%22%7D%7D%7D%7D	2002 թվականի օգոստոսի 4-ին Դիմումատուի որդին մահացել է: Գործը հիմնականում վերաբերում է 2001-2002 թթ. պարտադիր զինվորական ծառայության ընթացքում դիմումատուի որդու մահվան ոչ արդյունավետ քննությանը Այս գործով Դատարանը գտավ, որ իշխանությունները չեն կարողացել արդյունավետ հետաքննություն իրականացնել այն հանգամանքների վերաբերյալ, երբ դիմումատուի որդին ստացել է մահացու վնասվածքը (2-րդ հոդվածի դատավարական խախտում), ինչպես նաև տվել է այս վնասվածքի հիմնավոր բացատրությունը: և դրան հաջորդած մահը (2-րդ հոդվածի բովանդակային խախտում):	2-րդ հոդվածի նյութաիրավական և ընթացակարգային խախտումներ կյանքի համար վտանգավոր վնասվածքի և այդ փաստով իրականացված քննության մասով
21.	Ծատուրյանն ընդդեմ Հայաստանի	10.01.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22:%7B%22itemid%22:%7B%22001-108504%22%7D%7D%7D%7D	Մույն գործի փաստերը նման են Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործին: Դիմումատուն հանդիսացել է Եհովայի վկա կրոնական կազմակերպության անդամ և կրոնական համոզմունքների պատճառով հրաժարվել է պարտադիր զինվորական ծառայությունից՝ փոխարենը առաջարկելով իրեն փոխադրել այլընտրանքային ծառայության, ինչը մերժվել է: Դիմումատուն քրեական պատասխանատվության է ենթարկվել:	9-րդ հոդվածի խախտում:
22.	Ամիրյանն ընդդեմ Հայաստանի	13.01.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22:%7B%22itemid%22:%7B%22001-90600%22%7D%7D%7D%7D	Սարգիս Ամիրյանը 2003 թվականի ՀՀ նախագահական ընտրություններում հանդիսացել է ընդդիմության թեկնածուի վստահված անձ: 2003 թվականի փետրվարի 21-ին մասնակցել է Երևանում տեղի ունեցած ցույցին: Հաջորդ օրը երկու ոստիկաններ այցելել են նրա տուն և տարել նրան Երևանի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժին, որտեղ նրա նկատմամբ վարչական վարույթ է հարուցվել 2003թ.-ի փետրվարի 21-ի ցույցին մասնակցելու համար: Նույն օրը՝ մի քանի ժամ անց, նա տարվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ասյանի դատարան: Կարճատև նիստից հետո դատարանը, ղեկավարվելով ՎԻՎՕ 180.1-րդ հոդվածով, դատապարտել է նրան 15 օր ժամկետով վարչական կալանքի գտնելով, որ Ս. Ամիրյանը «2003թ.-ի փետրվարի 21-ին Երևանում մի	11-րդ հոդվածի խախտում:

				խումբ անձանց հետ Վրացիանում» մասնակցել է չարտոնված ցույցի»: 2003թ.-ի փետրվարի 27-ին Ս. Ամիրջանի փաստաբանը դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը: 2003թ.-ի մարտի 1-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը վերանայել է դատապարտումը և որոշել է փոփոխել կալանքի վարչական տուգանքը 1,000 դրամ վարչական տուգանքով և կարգադրել է ազատ արձակել Ս. Ամիրջանին: Նույն օրը նա ազատ է արձակվել՝ 7 օր պատիժը կրելուց հետո:	
23.	Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (1)	13.01.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-90537%22%5D%7D	<p>Մաքսիմ Գասպարյանը հանդիսացել է ՀՀ նախագահի թեկնածուի վստահված անձ 2003թ.-ի փետրվարի 19-ի և մարտի 5-ի նախագահական ընտրություններում: 2003 թ. փետրվարի 23-ին դիմումատուն մասնակցել է երթերից մեկին: 2003թ.-ի փետրվարի 26-ին նրան այցելել են ոստիկա- նության երկու աշխատակիցներ և հրավիրել ոստիկանություն: Ոստիկա նությունում տեղեկացել է, որ իր դեմ հարուցվել է վարչական վարույթ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 172-րդ հոդվածի հիմքով՝ 23.02.2003թ. արգելված հանրահավաքին մասնակցելու և հասարակական կարգը խախտելու հիմքերով: Նույն օրը Կենտրոն և ՆորքՄարաշ առաջին ատյանի դատարանի կողմից ենթարկվել է տասն օրվա վարչական կալանքի: Որոշման մեջ նշվել է, որ այն ենթակա էր բողոքարկման ՎԻՎՕ 289-րդ հոդվածով սահմանված կարգով: Կալանավայրում նրան առաջարկվել է լրացնել մի ձևաթուղթ, որը հասցեագրված էր ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին, և որում նշված էր հետևյալ արտահայտությունը. «ես զղջում եմ իմ արարքի համար և խնդրում եմ վերանայել իմ գործը»: Ս. Գասպարյանը ստորագրել է փաստաթղթի տակ: Նույն օրը Վերաքննիչ դատարանի նախագահը քննել է բողոքը և որոշել կալանքը փոխարինել երկու հազար դրամ վարչական տուգանքով: Նույն օրը Ս. Գասպարյանն ազատ է արձակվել կալանքից՝ անազատության մեջ մնալով երեք օր: Հետագայում փորձել է վիճարկել առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը, սակայն նրա բոլոր բողոքները մերժվել են այն պատճառաբանությամբ, որ վերջինս բաց էր թողել բողոքարկման</p>	11-րդ հոդվածի խախտում:

				համար սահմանված 10-օրյա ժամկետը:	
24.	Սափեյանն ընդդեմ Հայաստանի	13.01.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22%5D%3A%5B%22001-90535%22%5D%7D	<p>2003 թվականի փետրվարի 26-ին Ժոռա Սափեյանն իր ընկերների հետ միասին ուղևորվում էր Աշնակ գյուղից դեպի Երևան՝ մասնակցելու ընդդիմության հրավիրած հանրահավաքին՝ կախված փետրվարի 19-ին անցկացված նախագահական ընտրությունների առաջին փուլի հետ: Երևան տանող ճանապարհին նրանց մեքենան կանգնեցրել են քաղաքացիական հազուստով մի քանի անձինք, որոնք ներկայացել են որպես Արագածոտնի մարզային ոստիկանության բաժանմունքի աշխատակիցներ: Ժ. Սափեյանն ու նրա գործընկերները տարվել են մարզային ոստիկանության բաժանմունք, իսկ այնտեղից էլ տեղափոխվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի կենտրոն բաժանմունք, որտեղ որոշվել է նրան ենթարկել վարչական պատասխանատվության 2003թ.-ի փետրվարի 20-ին կայացած հանրահավաքին մասնակցելու համար: Մի քանի ժամ անց նա տարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, որտեղ կարճատև նիստից հետո դատարանը որոշել է Ժ. Սափեյանին ենթարկել 10-օրյա վարչական կալանքի ՎԻՎՕ 180.1-րդ հոդվածի հիմքով՝ չարտոնագրված երթին մասնակցելու համար, որով խախտել է փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման սահմանված կարգը: 2003թ.-ի փետրվարի 27-ին Ժ. Սափեյանի փաստա- բանը վերաքննիչ բողոք է բերել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարան և դիմել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով բողոքարկել առաջին ատյանի դատարանի որոշումը: 2003թ.-ի մարտի 2-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահը վերանայել է Ժ. Սափեյանի դատապարտումը և որոշել է փոխել պատժա- միջոցը՝ նշանակելով վարչական տուգանք 1,000 դրամի չափով: Նույն օրը, պատիժը 4 օր կրելուց հետո, Ժ. Սափեյանը ազատ է արձակվել կալանքից:</p>	11-րդ հոդվածի խախտում:
25.	Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի	02.12.2008	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22%5D%3A%5B%22001-90535%22%5D%7D	Կիրակոսյանը հանդիսանում էր ԱԺՄ ընդդիմադիր կուսակցության անդամ: 2003թ.-ի մարտի 21-ին մասնակցել է Երևանում կայացած երթի, որը համաժողովրդական հանրահավաքի մի մասն էր կազմում և որը հրավիրվել էր ընդդիմության կողմից՝ 2003 թվականի փետրվար և	3-րդ հոդվածի խախտում, 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝

		1-89959%22}}	<p>մարտ ամիսներին կայացած նախագահական ընտրությունների արդյունքները բողոքելու կապակցությամբ: Հաջորդ օրը նա բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, որտեղ նրան հայտնել են, որ ենթարկելու են վարչական տույժի այն բանի համար, որ «2003թ.-ի մարտի 21-ին մասնակցել է Երևանում տեղի ունեցած հանրահավաքին և ոստիկանության բաժին բերման ենթարկելիս չի ենթարկվել ոստիկանության աշխատողների օրինական պահանջներին և զագրախոսել է»՝ ՎԻՎՕ 182-րդ հոդվածի հիմքով: Ձերբակալությունից մոտ երկու ժամ հետո Կիրակոսյանը բերվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան: Կարճատև նիստից հետո դատարանը նրան ենթարկել է վարչական կալանքի տասն օր ժամկետով ՎԻՎՕ-ի 182-րդ հոդվածի հիման վրա, որից հետո նա տարվել է ոստիկանության Արմավիրի ժամանակավոր պահման վայր՝ պատիժը կրելու համար: Արմավիրի ժամանակավոր պահման վայրում նրան տեղավորել են մի խցում յոթ այլ անձանց հետ: Խցի մակերեսը 8.75 քմ էր և այն ուներ շատ փոքր, կեղտոտ մի պատուհան, որը պատված էր երկաթյա կեղտոտ ճաղերով, որոնք խանգարում էին, որպեսզի բնական լույսը ներթափանցեր խուց: Խցում չկային մահճակալներ, և կալանավորները ստիպված էին քնել հատակին: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով: 2003թ.-ի մարտի 23-ին Լ. Կիրակոսյանը խցի բոլոր կալանավորների անունից նամակ է ուղարկում Արմավիրի մարզի դատախազին և ոստիկանության մարզային ստորաբաժանման պետին՝ խնդրելով իրենց ազատ արձակել կամ որպես այլընտրանք իրենց տեղափոխել ավելի լավ բանտախուց: 2003թ.-ի մարտի 25-ին նրան երեք այլ կալանավորների հետ տեղափոխել են մեկ այլ խուց: Նոր խցի մակերեսը նույնպես 8.75 քմ էր և պատուհանը նույնանման վիճակում էր: Խցում կար միայն երկու մահճակալ, և այդ պատճառով կալանավորները ստիպված էին հերթով քնել: Մահճակալների ներքնակները շատ կեղտոտ էին, և նրանց չէին տրամադրվել սպիտակեղեն կամ վերմակներ: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով: Խցում լույսը միշտ՝ օր ու գիշեր, միացած էր, և կալանավորները չէին կարող անջատել այն: Զուգարանը տեղակայված էր խցից դուրս և նախատեսված էր ժամանակավոր պահման վայրի այդ հարկում գտնվող բոլոր</p>	<p>նույն հոդվածի 3-րդ մասի գուգակցությամբ:</p> <p>Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:</p>
--	--	------------------------------	--	--

				կալանավորների ընդհանուր օգտագործման համար: Այն շատ կեղտոտ էր, քանի որ հոսող ջուր չկար: Կալանավորներին թույլատրվում էր գուգարանից օգտվել օրվա ընթացքում միայն երեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան:	
26.	Կարապետյանն ընդդեմ Հայաստանի	27.10.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-95283%22%5D%7D	Մույն գործի փաստերը, մասնավորապես՝ ձերբակալվելու և դատապարտվելու հանգամանքները նման են Լ. Կիրակոսյանի և Ա. Մխիթարյանի (տե՛ս Լ. Կիրակոսյանի և Ա. Մխիթարյանի գործը) գործի փաստերին, քանի որ նրանք համազրուդացիներ էին և ձերբակալվել, դատապարտվել ու պատիժը կրել են միասին:	3-րդ հոդվածի խախտում: Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի «բ»-կետի համակցությամբ:
27.	Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի	02.12.2008	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-89966%22%5D%7D	2003 թ. մարտի 21-ին դիմումատուն մասնակցել է Երևանում կայացած երթի, որը համաժողովրդական հանրահավաքի մի մասն էր կազմում: Մույն գործի փաստերը, մասնավորապես՝ ձերբակալվելու և դատապարտվելու հանգամանքները նման են Լ. Կիրակոսյանի և Ջ. Կարապետյանի գործի փաստերին, քանի որ նրանք համազրուդացիներ էին և ձերբակալվել, դատապարտվել ու պատիժը կրել են միասին:	3-րդ հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի զուգակցությամբ: Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:
28.	Գալստյանն ընդդեմ Հայաստանի	15.11.2007թ.	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-83297%22%5D%7D	Դիմումատուն 2003 թվականին մարտի 5-ին նախագահական ընտրությունների երկրորդ փուլում հանդիսացել է ընտրատարածքային տե- դամասային հանձնաժողովներից մեկի անդամ և ընդդիմադիր հիմնական թեկնածուի վստահված անձը: Նա մասնակցել է 2003թ.-ի ապրիլի 7-ին Երևանի կենտրոնում տեղի	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում դիմումատուի անաչառ դատարանի

				<p>ունեցող հանրահավաքին: Հանրահավաքը եղել է քաղաքական բնույթի, հնչել են կառավարության և նախագահական ընտրություններին վերաբերող քննադատություններ: Հանրահավաքից հետո տուն գնալու ճանապարհին նա բերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ ձերբակալող ոստիկանները կազմել են բերման ենթարկելու արձանագրություն և նշել, որ Ա. Գալստյանը «ձերբակալվել է մոտավորապես 17:30-ի սահմաններում Մաշտոցի պողոտայում՝ ճանապարհային երթևեկությանը խոչընդոտելու և հանրահավաքի ընթացքում հասարակական կարգը խախտելու համար»: Այնուհետև ոստիկանները կազմել են վարչական իրավախախտման արձանագրություն, որում նշել են, որ Ա. Գալստյանը «մասնակցել է հանրահավաքի, որի ընթացքում խախտել է հասարակական կարգը»: Նրա գործողությունները որակվել են ՎԻՎՕ 172-րդ հոդվածով՝ որպես մանր խուլիգանություն: Նույն օրը Ա. Գալստյանը տարվել է դատարան, որտեղ դատավորը կարճատև լուսններից հետո Ա. Գալստյանին դատապարտել է 3 օրվա վարչական կալանքի: Ա. Գալստյանը պնդել է, որ դատական նիստը տևել է 5 րոպե և տեղի է ունեցել դատավորի աշխատասենյակում: Ա. Գալստյանը փորձել է ներկայացնել գործի հանգամանքները՝ միջնորդելով դատավորին կանչել վկաների և պաշտպան է պահանջել, սակայն դատավորը լուռ լսել է, ստորագրել է որոշ թղթեր և համարել է դատական նիստը փակված, որից հետո Ա. Գալստյանին տարել են կալանավայր: 2003թ.-ի ապրիլի 28-ին բողոքել է ՀՀ գլխավոր դատախազին դատավճռի դեմ: 2003թ.-ի մայիսի 27-ի դատախազը տեղեկացրել է որ 2003թ.-ի ապրիլի 7-ի որոշումը հիմնավորված է, և հիմքեր չկան այն բողոքարկելու համար:</p>	<p>կողմից արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի առնչությամբ:</p> <p>6-րդ հոդվածի 1-ին կետի գուգակցությամբ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի խախտում:</p> <p>6-րդ հոդվածի 1-ին կետի գուգակցությամբ 6-րդ հոդվածի 3-րդ (գ) կետի խախտում:</p> <p>11-րդ հոդվածի խախտում:</p> <p>7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:</p>
29.	Աշուղյանն ընդդեմ Հայաստանի	17.07.2008	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%7B%22document%22%3A%22001-87642%22%7D%7D	<p>Գայանե Աշուղյանը ենթարկվել է վարչական տուգանքի, իսկ այնուհետև 5-օրյա վարչական կալանքի 2003թ.-ի ապրիլի 7-ին և 9-ին ընդդիմության հրավիրված հանրահավաքներին մասնակցելու համար, որոնք նվիրված էին 2003թ.-ի փետրվարի 19-ին և մարտի 5-ին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքներին: Երկու դեպքում էլ վարչական տույժը սահմանվել է ՎԻՎՕ 172-րդ հոդվածի հիման վրա՝ մանր խուլիգանություն: Երկու դեպքում էլ Գ.</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:</p> <p>Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:</p>

				<p>Աշուղյանը բերման է ենթարկվել փողոցից, տարվել ոստիկանություն, որտեղ կազմվել է վարչական տույժի ենթարկելու արձանագրություն, որից հետո անմիջապես տարվել է դա տարան: Դատական նիստերը երկու դեպքում էլ ընթացել են առանց փաստաբանի, դատավորի առանձնասենյակում, որտեղ ներկա էին միայն Գ. Աշուղյանը, դատավորը, ուղեկցող ոստիկանը և դատական նիստերի քարտուղարը: Նախաքննական և դատական վարույթները երկու դեպքում էլ տևել են մի քանի ժամ: 2003թ.-ի ապրիլի 18-ին «Փետրվարի 22» հասարակական կազմակերպությունը Գ. Աշուղյանի անունից բողոք է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազին: 2003թ.-ի մայիսի 12-ի գրությամբ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազը հասարակական կազմակերպությանը տեղեկացրել է, որ 2003թ.-ի ապրիլի 7-ի և 9-ի որոշումները հիմնավորված են եղել, և բացակայում են դրանք բողոքարկելու հիմքերը:</p>	<p>7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված քրեական գործերով գանգատարկման իրավունքի խախտում:</p>
30.	Մարուխանյան ընդդեմ Հայաստանի	27.05.2008թ.	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-86482%22%5D%7D</p>	<p>2003 թվականի մարտի 15-ին դիմումատուն գրանցվել է թիվ 12 ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում մեծամասնական ընտրակարգով թեկնածու գրանցվելու համար: Ընտրատարածքային հանձնաժողովին ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթեր, ներառյալ՝ սեփականության մասին հայտարարագիրը: 2003թ.-ի ապրիլի 28-ին թիվ 12 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին դիմումատուի անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքի վերաբերյալ: 2003թ.-ի ապրիլի 29-ին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ ի պատասխան Ընտրական հանձնաժողովի կողմից ուղարկված գրության, տեղեկացրել է, որ բնակարանում, որտեղ բնակվում է դիմումատուն, գրանցված են վեց անձ, ներառյալ՝ դիմումատուն և հանդիսանում են բնակարանի համասեփականատեր: Սույն գրության հիման վրա ընտրական հանձնաժողովը 2003 թ. մայիսի 3-ին որոշել է դիմումատուի թեկնածության գրանցումը ճանաչել անվավեր, քանի որ դիմումատուն գույքի սեփականության վերաբերյալ հայտարարագրի մեջ չէր նշել բնակարանում</p>	<p>1-ին արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված ընտրվելու իրավունքի խախտում:</p>

				<p>համասեփականատեր լինելու փաստի մասին: Դիմումատուն որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում: 2003թ.-ի ապրիլի 29-ի գրությունը չի համապատասխանում իրականությանը: Իր ընտանիքը բաղկացած չի եղել վեց անձից, քանի որ իր հայրը մահացել է 1982թ.-ին: Այնուհետև, նա նշել է, որ տեղյակ չի եղել այդ անհամապատասխանության մասին և իր հայտարարագիրը լրացրել է իր մոտ առկա պաշտոնական փաստաթղթերի հիման վրա: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սխալմամբ նույնացրել է կեղծարարություն և անճշտություն հասկացությունները: 2003թ.-ի մայիսի 8-ին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի հայցը՝ հիմնավորված համարելով, որ դիմումատուն, իր հայտարարագրում կեղծիք կատարելով, թաքցրել է բնակարանի նկատմամբ իր համատեղ ընդհանուր սեփականության իրավունքի փաստը: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և ենթակա չի եղել բողոքարկման:</p>	
31.	Աշոտ Հարությունյան ընդդեմ Հայաստանի	15.06.2010	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-99403%22%5D%7D</p>	<p>Աշոտ Հարությունյանը ձերբակալվել է 2003թ մայիսին, առաջադրվել է մեղադրանք խարդախության հիմքով և խափանման միջոց է ընտրվել կալանքը: 2004թ. հունվարին դատապարտվել է 7 տարվա ազատազրկման: Մինչ դատապարտվելը պահվել է Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում, իսկ դատապարտվելուց հետո՝ Կոշում:Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց քիչ անց տեղափոխվել է դատապարտյալների հիվանդանոց, որտեղ հետագոտվելուց հետո բժիշկները եզրակացրել են, որ անհրաժեշտ է Ա. Հարությունյանին ենթարկել վիրահատության, քանի որ վերջինս տառապում էր աղեստամոքսային սուր հիվանդությամբ: Վիրահատություն, սակայն, չի իրականացվել: 2004 թ. հուլիսին տարել է ինֆարկտ, որի առնչությամբ նույնպես բժշկական միջամտության չի ենթարկվել: Ի պատասխան կալանքը փոխելու և մասնագիտացված բժշկական հաստատությունում անհրաժեշտ բժշկական խնամք և բուժում ապահովելու նպատակով փաստաբանի միջնորդությունների՝ կալանավայրի ղեկավարությունը շարունակ պատասխանել է, որ կալանավայրի բժշկական անձնակազմ ի վիճակի է վերջինիս համար ապահովել բժշկական խնամք և բուժում: 2007թ. Ա. Հարությունյանը</p>	<p>3-րդ հոդվածի խախտում դիմումատուին քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ բժշկական օգնություն չցուցաբերելու առնչությամբ և դիմումատուին բողոքարկման վարույթի ընթացքում մետաղյա ճաղավանդակի մեջ պահելու առնչությամբ:</p>

				<p>պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել, սակայն դատախազի բողոքի հիման վրա վերադաս դատարանը վերանայել է առաջին ատյանի դատարանի որոշումը և հրահանգել Ա. Հարությունյանին վերադարձնել կալանավայր, որտեղ էլ 2009թ. հունվարին նա մահացել է: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում Ա. Հարությունյանը պահվել է երկաթե ճաղավանդակի մեջ:</p>	
32.	Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի	16.03.2010	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-97668%22%7D%7D	<p>2003 թվականի օգոստոսի 17-ին Վարդան Մամիկոնյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ ճանապարհային պատահարի փաստի առթիվ, որի արդյունքում մահ է պատճառվել: Նրան առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար, որն անզուգույնությամբ առաջացրել է մարդու մահ: Քննության ժամանակ մի շարք վկաներ, այդ թվում՝ երեք ականատես վկաներ Ջ.-ն, Մ.-ն և Օ.-ն, ցուցմունքներ են տվել Վ. Մամիկոնյանի դեմ, մասնավորապես, որ նա մեքենան վարում էր բարձր արագությամբ: Ի տարբերություն առաջին երկու վկաների՝ երրորդ վկայի հետ նախաքննության և դատաքննության փուլերում առերեսումներ չեն անցկացվել: Առաջին ատյանի դատարանը բավարարվել է միայն վկա Օ.-ի նախաքննական ցուցմունքի հրապարակումով՝ գտնելով, որ վկայի ցուցմունքը գործի ելքի վրա էական ազդեցություն չէր կարող թողնել, քանի որ բովանդակությամբ նույնանման էր մյուս երկու վկաների ցուցմունքներին: Վերաքննիչ դատարանը դատավճիռը թողել է անփոփոխ: Վճռաբեկ դատարանը բողոքը թողել է առանց քննության ժամկետանց լինելու պատճառ- ութանությամբ: Վ. Մամիկոնյանը պնդում էր, որ Վճռաբեկ դատարանը հաշվի չէր առել, որ բողոքը ժամկետանց էր բերվել այն պատճառով, որ Վերաքննիչ դատարանն իր որոշումն ուղարկել էր սահմանված ժամկետների ուշացումով:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
33.	Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի	15.06.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-174418%22%7D%7D	<p>2003 թվականի օգոստոսի 22-ի և 2006 թվականի դեկտեմբերի 22-ի ուժի մեջ մտած վճիռները, ինչպես նաև 2004 թվականի հոկտեմբերի 22-ի ուժի մեջ մտած որոշումը՝ բոլորը կայացված հոգուտ դիմումատուի, մնացել են չկատարված: ՌԻստի այդ ներպետական վճիռները չկատարելը տևել է շուրջ տասներեք տարի և չորս ամիս: Հայաստանի</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ՝ ուժի մեջ մտած վճիռները կատարելու համար, չեն թույլատրել 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների՝ սույն գործով իրենց ողջ արդյունավետ գործողությունը, և, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ դիմումատուի գույքային պահանջը չհիմնավորված երկար ժամանակահատվածով մնացել է չբավարարված, նրանք չեն հարգել նրա՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքները	
34.	Զայյանը և այլոք ընդդեմ Հայաստանի	17.03.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7B%22itemid%22:%7B%22001-161408%22%7D%7D	2004թ. հունվարի 9-ին հարուցվել է քրեական գործ: Գործը վերաբերում է երեք նախկին զինծառայողների կողմից բողոքների հետաքննության անարդյունավետությանը: Նրանք ենթարկվել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի 2004 թ. երկու հայ զինծառայողների ենթադրյալ սպանության գործով ռազմական դատախազության անդամների կողմից իրականացված հետաքննության ընթացքում: Բողոքարկված գործողությունները տեղի են ունեցել ինչպես դիմումատուների՝ Լեոնային Ղարաբաղում առաջին 3-օրյա կալանքի ընթացքում, այնպես էլ հետագայում նրանց Երևան տեղափոխվելուց հետո: Գործը վերաբերում է նաև առաջին դիմումատուի նախնական 3-օրյա կալանքի անօրինականությանը, քանի որ դա կազմում էր ռազմական կարգապահական կալանքի կամայական կիրառում: Նաև կալանքի ընթացքում դիմումատուները անհապաղ չեն տեղեկացվել ձերբակալման պատճառների մասին, անհապաղ չեն ներկայացվել դատավորի առջև և, բացի այդ, մնացել են կալանքի տակ առանց դատարանի որոշման՝ գործը առաջին ատյանի դատարան տեղափոխելուց հետո):	3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում, 5-րդ հոդվածի խախտում:
35.	Անտոնյանն ընդդեմ Հայաստանի	02.10.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7B%22itemid%22:%7B%22001-113548%22%7D%7D	2004 թվականի հունվարի 20 ոստիկանությունը մերժել է Դիմումատուին՝ երեխաներին հաշվառումից հանելու մերժման մասին: Անօրինական միջամտություն իր գույքից անարգել օգտվելու, սեփականության իրավունքին. Իշխանությունները բնակարանի սեփականատիրոջից պահանջում էին փոխհատուցում վճարել, որպեսզի դադարեցնեն երրորդ անձանց՝ բնակարանը օգտագործելու իրավունքը՝ ներպետական օրենսդրության անկանխատեսելի	1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				կիրառման արդյունքում:	
36.	Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի	02.12.2008	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-89969%22	2004 թ. մարտ-մայիս ամիսներին Երևան քաղաքում մի շարք հանրահավաքներ են տեղի ունեցել, որոնք կազմակերպվել էին ընդդիմադիր կուսակցությունների կողմից 2003 թ. փետրվար-մարտ ամիսներին կայացած ընտրությունների ժամանակ տեղի ունեցած ենթադրյալ անօրինականությունների դեմ, որոնք վիճարկում էին վերընտրված նախագահի լեգիտիմությունը: Դիմումատուն մասնակցել է այդ հանրահավաքներից մի քանիսին: Դիմումատուն 2004 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում երկու անգամ ենթարկվել է 10-օրյա վարչական կալանքի՝ ոստիկանի օրինական պահանջներին չենթարկվելու համար: Երկու պատիժն էլ Մ. Թադևոսյանը կրել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի ժամանակավոր պահման վայրում: 2004թ.-ի ապրիլի 14-ին կալանքից ազատվելուց հետո նրան պարբերաբար այցելել են ոստիկանության աշխատակիցները և խուզարկություններ են կատարել իր բնակարանում: Յուրաքանչյուր նման այցելության ժամանակ նա ստիպված է եղել թաքնվել՝ վախենալով, որ նրան նորից կտանեն ոստիկանություն: Երկու վարույթներն էլ իրականացվել են առանց պաշտպանի ներկայության, որից նա սակայն չի հրաժարվել: Դատաքնության ժամանակ դատավորը չի հարցաքննել Մ. Թադևոսյանին, չի ընդունել նրա կողմից ներկայացված ապացույցները, չի տրամադրել անհրաժեշտ ժամանակ պաշտպանական կողմի վկաներին հրավիրելու, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների և մեղադրական կողմի վկաների հետ առերեսման համար :	3-րդ հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի գուգակցությամբ: 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:
37.	Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի	10.04.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-110266%22	2003 թվականի փետրվար և մարտ ամիսներին նախագահական ընտրություններ են անցկացվել և դիմումատուն ընդդիմադիր ՀԺԿ-ի վստահված անձն էր: ՀԺԿ ընդդիմադիր թեկնածուն ընտրությունների արդյունքները բողոքարկել էր Սահմանադրական դատարանում: 2004թ. լրացել էր վերընտրված Նախագահի լեգիտիմությունը վիճարկելու մեկ տարվա ժամկետը և ընդդիմությունը քարոզարշավ էր ծավալել, հայտարարել ցույցերի շարք սկսելու մտադրության մասին՝	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի հետ միասին վերցված՝ դիմումատուի

				<p>պահանջելով նախագահի հրաժարականը: Դիմումատունն ձերբակալվել էր 2004 թվականի ապրիլի 8-ին՝ հանրահավաքին մասնակցելու կոչով թռուցիկներ բաժանելու համար: Նույն տարվա հունիսին նա դատապարտվել էր մեկ տարվա պայմանական ազատազրկման՝ իշխանությունը բռնությամբ տապալելու կոչերի համար:</p>	<p>կողմից իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու առնչությամբ:</p>
38.	Հակոբյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի	10.04.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22%5D%3A%5B%22001-110263%22%5D%7D	<p>Այս գործով Հակոբ Հակոբյանը, Գոռ Մարտիրոսյանը եւ Համլետ Պետրոսյանը ձերբակալվել էին 2004 թվականի ապրիլյան դեպքերից հետո և ենթարկվել վարչական կալանքի՝ 4-7 օր ժամկետով: Կալանքը նպատակ է ունեցել կանխել նրանց մասնակցությունը Երևանում տեղի ունեցող ցույցերին: Նրանք բողոքել էին, որ իրենց կալանավորումն ապօրինի է եղել եւ մեղադրանքները՝ արհեստական: Նաև պնդել են, թե վարչական վարույթն անարդար էր, քանի որ իրենց գործերը քննել են արագացված կարգով՝ չտալով բավարար ժամանակ, ինչպես եւ հնարավորություն չեն ունեցել բողոքարկել դատավճիռը:</p>	<p>11-րդ հոդվածի խախտում, 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, այն հիմքով, որ դիմումատուների ազատությունից զրկումը եղել է կամայական և անօրինական, 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում նույն հոդվածի 3-րդ կետի բ ենթակետի հետ միասին այն առումով, որ դիմումատուների նկատմամբ չի իրականացվել արդար դատաքնություն, երկու վարչական վարույթների ժամանակ չէր տրամադրվել բավարար</p>

					<p>ժամանակ և հնարավորություն իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար: 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:</p>
39.	Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի	27.10.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-95288%22%5D%7D	<p>Ստեփան Ստեփանյանը որպես ընդդիմադիր կուսակցության անդամ և դիտորդ մասնակցել է 2003 թվականի խորհրդարանական ընտրություններին: 10.04.2004 թվականի հանրահավաքին մասնակցելուց հետո 20.05.2004 թվականին ենթարկվել է 8-օրյա վարչական կալանքի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիման վրա «հասարակական կարգը խախտելու և ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու համար»: Դիմողն առաջին աստիճանի դատարանի որոշումը, որն ուժի մեջ էր մտել հրապարակման պահից, բողոքարկել է Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին: 08.06.2004թ. դատարանի նախագահը մերժել է դիմումը՝ հիմնավորելով, որ դիմողը «կատարել է նշված արարքը»:</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:</p>
40.	Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի	02.10.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-113302%22%5D%7D	<p>2003 թվականի փետրվար և մարտ ամիսներին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Դիմումատուն ընտրություններում հիմնական ընդդիմադիր թեկնածուի՝ ՀԺԿ ներկայացնող թեկնածուի վստահված անձ էր: Երբ 2004 թվականի ապրիլ ամսին լրացավ մեկ տարվա վերջնաժամկետը, վերընտրված Նախագահի օրինականությունը վիճարկելու համար ընդդիմությունը քարոզարշավ ծավալեց և սկսեց երկրի ողջ տարածքով հանրահավաքներ անցկացնել իր պահանջները ներկայացնելու համար: 2004 թվականի մարտ և ապրիլ ամիսներին բազմաթիվ հանրահավաքներ անցկացվեցին, որոնց փաստորեն մասնակցում էր</p>	<p>3-րդ հոդվածի խախտում առ այն, որ տեղի է ունեցել խոշտանգում և ընթացակարգային խախտում առ այն, որ իշխանությունները արդյունավետ քննություն չեն</p>

				<p>դիմումատուն: Դիմումատուի նկատմամբ բռնություններ կիրառելու միջոցով ցուցմունքներ են կորզվել:</p> <p>Ոստիկան Ա.Մ.—ի՝ աշխատասենյակից դուրս գալուց հետո մի քանի րոպե անց ներս է մտել ոստիկան Հ.Մ.-ն և սկսել հայհոյել իրեն: Այնուհետև ներս է մտել մեկ ուրիշ ոստիկան՝ Ա.Կ.-ն, և սկսել մետաղյա իրով հարվածել ամորձիների շրջանում: Հետո իրեն ձեռնաշղթաներ են հագցրել, և ոստիկան Ա.Կ.-ն շարունակել է հարվածել և խփել գոտկատեղից ներքև, ինչից հետո գիտակցությունը կորցրել է:</p>	<p>իրականացրել վատ վերաբերմունքի վերաբերյալ: 14-րդ հոդվածի խախտում առ այն, որ դատական մարմինները արդյունավետ հետաքննություն չեն իրականացրել:</p>
41.	Սադաթեյանն ընդդեմ Հայաստանի	20.10.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-158191%22%7D	<p>Անահիտ Սադաթեյանը դատավոր է աշխատել Գեղարքունիքի մարզի դատարանում, սակայն 2004-ին հեռացվել է աշխատանքից: Պիմումատուն ցանկացել է վիճարկել իրեն պաշտոնից ազատելու մասին Նախագահի 2004 թվականի ապրիլի 30-ի հրամանագրի օրինականությունը, և դատարաններն ի վերջո եզրակացրել են, որ իրավասություն չունեն քննարկելու Նախագահի հրամանագիրը՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասին, Քաղաքացիական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասին և Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
42.	Սաֆարյանն ընդդեմ Հայաստանի	21.01.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-160089%22%7D	<p>2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատել է Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345,000 քմ ընդհանուր մակերեսով: Ըստ երևույթին, դիմումատուի հողամասը եղել է այդ գոտիներից մեկում: 2004 թվականի մայիսի 7-ին դիմումատուն դիմել է նոտարական գրասենյակ՝ իր գույքը չորս զավակներին նվիրատվությամբ փոխանցելու և գործարքը վավերացնելու պահանջով:</p> <p>Նոտարական գրասենյակը մերժել է պահանջը՝ հղում կատարելով Կառավարության թիվ 1151-Ն որոշմանը՝ նշելով, որ դիմումատուի գույքը գտնվում է օտարման գոտում:</p> <p>Հայաստանի իշխանությունները, մերժելով Դիմումատուի գույքը</p>	1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուի՝ իր գույքը զավակներին նվիրատվությամբ փոխանցելու անհնարիկության մասով:

				բաժանելու և դրա նկատմամբ սեփականության իրավունքը իր գավակներին փոխանցելու պահանջը, միջամտել են գույքից անարգել օգտվելու իրավունքին:	
43.	Գասպարյանն ընդդեմ Հայաստանի (2)	16.06.2009թ.	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-92963%22%7D%7D	2004 թվականի մայիսի 20-ին Մ. Գասպարյանը բերման է ենթարկվել Երևան քաղաքի ոստիկանության Շենգավիթի բաժին: Ըստ բերման ենթարկելու արձանագրության, նա «բերման է ենթարկվել Նժդեհ փողոցից երեկոյան ժամը 7 անց 45-ին ... հասարակական կարգը խախտելու համար» (ՎԻՎՕ 182-րդ հոդվածի հիմքով): Ըստ Մ. Գասպարյանի ոստիկանության բաժնում հարցաքննվել է երթերին մասնակցելու և ընդդիմությանն աջակցելու կապակցությամբ: Նա խնդրել է, որպեսզի թույլատրեն իրեն փաստաբան հրավիրել, ինչը, սակայն, մերժվել է ոստիկանների կողմից: Կառավարության պնդմամբ, ոստիկանության աշխատակիցները ներկայացրել են Մ. Գասպարյանին իր դատավարական իրավունքները և խորհուրդ են տվել վերջինիս օգտվել փաստաբան հրավիրելու իր իրավունքից, որից սակայն նա հրաժարվել է: Այնուհետև, Մ. Գասպարյանին երեկոյան ժամը 10-ին տարել են Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան, որտեղ կարճատև նիստից հետո դատարանը նրան մեղավոր է ճանաչել ՎԻՎՕ 182-րդ հոդվածի համաձայն և դատապարտել 8-օրյա վարչական կալանքի, ինչը նա կրել է ամբողջությամբ:	7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ նույն հոդվածի 3-րդ կետի «բ»- ենթակետի համակցությամբ:
44.	Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի	31.03.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-153349%22%7D%7D	Ծեծի, խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հետ կապված բազմաթիվ դիմում-բողոքները թողնվել են անհետևանք և որևէ գործողություն չի կատարվել դրանց բացակայությունը հիմնավորելու համար: 2004 թվականի հունիսի 8-ին քրեական գործ է հարուցվել տեղացի աղջկա սպանության փաստի առթիվ, ով երրորդ դիմումատուի համադասարանցին է եղել, և ում մարմինը հայտնաբերվել է դիմումատուների տանից ոչ հեռու: Այդ նույն օրը դիմումատուին տարել են Ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ նրան ապօրինի պահել են՝ առանց ձեռքարկումն արձանագրելու: Ոստիկանության բաժնում ոստիկանները նրան շարունակաբար ծեծել են՝ փորձելով ստիպել խոստովանել, որ վերոնշյալ սպանությունը կատարել է ինքը:	Երկրորդ և երրորդ դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի նյութաիրավական խախտում: Բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել 3-րդ

					<p>հողվածի ընթացակարգային խախտում:</p> <p>6-րդ հողվածի 1-ին կետի խախտում՝ զուգակցված 6-րդ հողվածի 3-րդ կետի (գ) ենթակետի հետ առայն, որ առաջին և երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից:</p> <p>6-րդ հողվածի 1-ին կետի խախտում առայն, որ առաջին դիմումատուն անհամաչափորեն զրկվել է դատարանի մատչելիության իրավունքից:</p>
45.	Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի	09.10.2012	https://hudoc.echr.coe.int/eng#{%22tabview%22:%22document%22},%22itemid%22:%22001-113756%22}}	Միսակ, Կիմա, Անդրանիկ, Նաիրա, Սեդա և Սոնա Դանիելյանները Բյուզանդի 11 հասցեում գտնվող 130 քմ մակերեսով տան համատեղ սեփականատերեր են: Մերի Դանիելյանը և Քրիստինե Մնացականյանը որպես նույն ընտանիքի անդամներ ունեցել են օգտագործման իրավունք, մինչդեռ Կառավարությունը պնդել է որ ունեցել են միայն բնակվելու իրավունք: 2002թ. օգոստոսի 1-ին նշված	1-ին արձանագրության 1-ին հողվածի խախտում:

				130-րդ ներառվել է պետության կարիքների համար օտարվող գոտիների շարքում: Օտարվումը կատարվել է օրենքի խախտմամբ: 2004 թվականի հունիսի 17-ին Կառավարության թիվ 909-Ն որոշմամբ թույլատրվել է Բյուզանդի փողոցի կառուցապատումն իրականացնելու նպատակով պայմանագիր կնքել «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հետ: 2004թ. օգոստոսի 25-ին վերջինս տեղեկացրել է Դիմումատուին գնահատման մասին և առաջարկել փոխհատուցում:	
46.	Թունյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի	09.10.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-113754%22%7D%7D	Գործի փաստական հանգամանքները նման են Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործին: Դիմումատուների սեփականություն հանդիսացող Բյուզանդի 9 հասցեում գտնվող գերակա շահ ճանաչված բնակարանը օտարվել է օրենքի խախտմամբ: 2004 թվականի հունիսի 17-ին Կառավարության թիվ 909-Ն որոշմամբ թույլատրվել է Բյուզանդի փողոցի կառուցապատումն իրականացնելու նպատակով պայմանագիր կնքել «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի հետ: 2004թ. օգոստոսի 25-ին վերջինս տեղեկացրել է Դիմումատուին գնահատման մասին և առաջարկել փոխհատուցում:	1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
47.	Մելիքյանն ընդդեմ Հայաստանի	19.02.2013	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-116595%22%7D%7D	Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հակասահմանադրական դրույթ կիրառելու դատական պրակտիկա, որը լիովին սահմանափակում է գործադիր իշխանության որոշման դեմ դատական պաշտպանություն ստանալու հնարավորությունը՝ նկատի ունենալով հայցերի դատական քննությունը մերժելը: Մասնավորապես գործի քննության պահին առկա կարգավորմամբ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ պարբերությամբ, որը դիմումատուի գործով կիրառվել է ներպետական դատարանների կողմից, ամբողջությամբ սահմանափակվել է դիմումատուի հնարավորությունը՝ իրականացնելու գործադիր իշխանության կայացրած որոշման, մասնավորապես՝ որոշման դեմ դատական պաշտպանության իրավունքը՝ անկախ այն հանգամանքից, որոշման ենթադրյալ հակաօրինականությունը կամ հակասահմանադրականությունը վկայակոչվել է թե ոչ:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դատարան դիմելու իրավունքի առումով:
48.	Մինասյանն ու Մեմերջյանն	23.06.2009	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-116595%22%7D%7D	Մինասյանը համարվում էր Փ. Բյուզանդի 9 հասցեի 26 քմ բնակարանի սեփականատեր: Երկրորդ հայցվորը (Մեմերջյանը) առաջին հայցվորի	1 արձանագրության

	ընդդեմ Հայաստանի		2:[%22document%22], %22itemid%22:[%22001-93184%22]} միայն փոխհատուցում՝ https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22], %22itemid%22:[%22001-105022%22]}	դուստրն էր և բնակվում էր նույն բնակարանում: Կառավարության թիվ 1151-Ն որոշման հիման վրա նրանց բնակարանն օտարվել է Գլխավոր պողոտայի շինարարության նպատակով: Կառուցապատող ընկերությունը (Գլենդելյ Նիլզ) երկու հայցվորներին առաջարկել է փոխհատուցում, որից նրանք հրաժարվել են՝ որոշելով օտարման օրինականությունը վիճարկել դատարաններում: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի որոշումով առաջին և երկրորդ հայցվորները զրկվել են սեփականության և օգտագործման իրավունքներից՝ 7,000 և 2,000 դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով փոխհատուցման դիմաց: Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններն առաջին ատյանի դատարանի որոշումը թողել են անփոփոխ:	1-ին հոդվածի խախտում:
49.	Ազանիկյանն ընդդեմ Հայաստանի	05.04.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22], %22itemid%22:[%22001-181859%22]}	2004 թվականի դեկտեմբերի 30-ին քննիչը որոշել է Քրեական օրենսգրքի (ՔՕ) 213-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դիմումատուի կողմից ենթադրաբար վաշխառություն կատարելու փաստի առնչությամբ քրեական գործ հարուցել: Սույն գործով մինչդատական վարույթի փուլը, ինչպես նաև բողոքարկման փուլը միանգամայն արագ են ավարտվել, սակայն Վարչական շրջանի դատարանում դատական քննության փուլը տևել է մոտավորապես չորս ու կես տարի: Չնայած Վարչական շրջանի դատարանում դատական քննության փուլում իշխանության կողմից չեն եղել ակտիվության բացակայության հատկապես երկար ժամանակահատվածներ, խնդիրն այն է, որ գործի քննությունը հետաձգվել է 136 անգամ, մեկ տարի և երեք ամիս տևողությամբ դատական քննությունից հետո վարույթը վերսկսվել է, և մեղադրանքները փոփոխվել են կամ նորերն են առաջադրվել վարույթի այդ փուլում: Չնայած հնարավոր է այս տարրերից մի քանիսը Վարչական շրջանի դատարանի հսկողությունից դուրս են եղել, այնուամենայնիվ, երկու կողմերի կողմից ներկայացված՝ դատական նիստը հետաձգելու մասին միջնորդություններն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ որոշում կայացնելը և բոլոր կողմերի ներկայությունը պատշաճ կերպով ապահովելը եղել են դրա լիազորությունների շրջանակում: Պայմանավորվող պետությունները պետք է իրենց դատական համակարգը կազմակերպեն այնպես, որ	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

				դատարանները կարողանան բավարարել 6-րդ հոդվածով սահմանված «ողջամիտ ժամկետի» պահանջը	
50.	Բաղդասարյանն ու Ջարիկյանցն ընդդեմ Հայաստանի	13.11.2014	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-147870%22%5D%7D	Գործի փաստական հանգամանքները նման են Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Թունյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի գործին: Այս և վերը նշված գործերի շրջանակներում գույքից զրկելը չի կատարվել «այն պայմաններում, որոնք նախատեսված են օրենքով: Դիմումատուներին և երրորդ անձին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանում էր քաղ. Երևան, Բյուզանդի փող. 25 հասցեում գտնվող, 55.7 քառակուսի մետր մակերես ունեցող բնակարանը: 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունեց թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատեց Երևանի Կենտրոն վարչական շրջանի վարչական սահմանում պետության կարիքների համար քաղաքաշինական նպատակներով վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345,000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Բյուզանդ փողոցը ներառված էր օտարման գոտիներում ընդգրկված փողոցների ցանկում: 2005 թվականի հունվարին Գրասենյակը դիմումատուներին տեղեկացրել է, որ նրանց բնակարանը ենթակա է օտարման և, որ այն գնահատվել է 20,080 ԱՄՆ դոլար: Որպես ֆինանսական խրախուսանք՝ նրանց առաջարկվել է հավելյալ գումար՝ 14,734.70 ԱՄՆ դոլարի չափով, եթե նրանք պայմանագիրը կնքեին հինգ օրվա ընթացքում: Դիմումատուները չեն ընդունել առաջարկը, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը:	1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
51.	Ղասաբյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի	13.11.2014	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-147868%22%5D%7D	Գործի փաստական հանգամանքները նման են Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Թունյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի գործին: Այս և վերը նշված գործերի շրջանակներում գույքից զրկելը չի կատարվել «այն պայմաններում, որոնք նախատեսված են օրենքով: Դիմումատու Լևոն Ղասաբյանին (այսուհետ՝ առաջին դիմումատու) սեփականության իրավունքով պատկանում էր քաղ. Երևան, Բուզանդի փող. 25 հասցեում գտնվող, 57 քառակուսի մետր մակերես ունեցող բնակարանը: Մնացած երեք դիմումատուները՝ առաջին	1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում

				<p>դիմումատուի ընտանիքի անդամները, որոնք բնակվում էին այդ նույն բնակարանում, պնդում են, որ նրանք տվյալ բնակարանի նկատմամբ ունեցել են օգտագործման իրավունք:</p> <p>2002թ. օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունեց թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատեց Երևանի Կենտրոն վարչական շրջանի վարչական սահմանում պետության կարիքների համար քաղաքաշինական նպատակներով վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345,000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Բյուզանդի փողոցը ներառված էր օտարման գոտիներում ընդգրկված փողոցների ցանկում: 2005 թվականի հունվարի 14-ի գրությամբ Գրասենյակն առաջին հայտատուին տեղեկացրել է, որ նրա բնակարանը ենթակա է օտարման, որ այն գնահատվել էր 23,640 ԱՄՆ դոլար, և որպես փոխհատուցում՝ նրան առաջարկել է այդ գումարը: 2005 թվականի հունվարի 18-ի գրությամբ առաջին դիմումատուն հայտնել է պայմանագիր կնքելու վերաբերյալ իր համաձայնությունը, սակայն չի համաձայնել առաջարկվող փոխհատուցման գումարի չափի շուրջ:</p>	
52.	Ղարիբյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի	13.11.2014	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%5B%7B%22document%22%3A%22001-147867%22%7D%5D%7D</p>	<p>Գործի փաստական հանգամանքները նման են Դանիելյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Թունյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի, Ղասաբյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի գործերին: Այս և վերը նշված գործերի շրջանակներում գույքից զրկելը չի կատարվել «այն պայմաններում, որոնք նախատեսված են օրենքով:</p> <p>Դիմումատուներին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանում էր քաղ. Երևան, Բյուզանդի փող. 25 հասցեում գտնվող, 44.1 քառակուսի մետր մակերես ունեցող բնակարանը:</p> <p>2002թ. օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունեց թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատեց Երևանի Կենտրոն վարչական շրջանի վարչական սահմանում պետության կարիքների համար քաղաքաշինական նպատակներով վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345,000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Բյուզանդի փողոցը ներառված էր օտարման գոտիներում ընդգրկված փողոցների ցանկում: 2005 թվականի հունվարի 14-ի գրությամբ Գրասենյակը դիմումատուներին տեղեկացրել է, որ նրանց բնակարանը ենթակա է օտարման և որ</p>	1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում

				անկախ, լիցենզավորված կազմակերպության կողմից այն գնահատվել էր 16,350 ԱՄՆ դոլար: Դիմումատուները չեն ընդունել առաջարկը, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը:	
53.	Ավակեյանն ընդդեմ Հայաստանի	30.03.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-172361%22%7D	2005 թվականի մայիսի 3-ի, 2007 թվականի հոկտեմբերի 24-ի և 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռները, որոնք բոլորն էլ հոգուտ դիմումատուի էին, 2007 թվականի հոկտեմբերի 24-ից մինչև 2012 թվականի փետրվարի 13-ը մնացել են անկատար: Այդ ներպետական վճիռները չկատարելը, հետևաբար, տևել է չորս տարի և երեք ամիս: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Հայաստանի իշխանությունները, վերջնական վճիռները կատարելու համար մի քանի տարի շարունակ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելով, թույլ չեն տվել, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժով գործեն, և որ այն հանգամանքի պատճառով, որ նրա պահանջը անհիմն երկար ժամկետով մնացել է չբավարարված, նրանք չեն կարողացել ապահովել նրա՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքները: Դիմումատուն չի ունեցել կատարողական վարույթներն արագացնելու կամ այդ վարույթների ձգձգման հետևանքով առաջացած ցանկացած վնասի մասով փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածով: Հետևաբար, տեղի է ունեցել նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:	6-րդ հոդվածի 1-ին կետի և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում: 13-րդ հոդվածի խախտում:
54.	Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի	27.11.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-114785%22%7D	2004 թվականի հուլիսի 1-ին «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դիմել և անցել են այլընտրանքային ծառայության, սակայն 2005թ. մայիս և հունիս ամիսներին դիմել են այն հաստատությունների տնօրեններին, որտեղ ծառայել են այն պահանջով, որ ծառայությունը գտնվել է զինվորական վերահսկողության ներքո և այդպես ծառայել այլևս չեն կարող: Ազատությունից զրկում և առանց ողջամիտ կասկածի. Եհովայի վկաների ապօրինի դատապարտումը զինվորական ծառայությունից հրաժարվելու համար. ապօրինի կալանքի կամ դատապարտման արդյունքում կրած նյութական վնասի հատուցման իրավունքի	5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» խախտում, 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

				բացակայություն. արդյունավետ միջոցի բացակայություն:	
55.	Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի	10.04.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-112103%22%5D%7D	2005 թվականի հունիսի 10-ին քննիչը որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին՝ ՀՀ քր. օր. 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու՝ 2005 թվականի հունիսի 10-ի և այն կասեցնելու՝ 2006 թվականի օգոստոսի 10-ի միջև ընկած ժամանակահատվածում գործի քննությունը զգալիորեն ձգձգվել է: Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը տևել է հինգ տարուց ավելի:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
56.	Ասատրյանն ընդդեմ Հայաստանի	09.02.2010	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-97155%22%5D%7D	2005 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 17:50-ին Միլվա Ասատրյանը ձերբակալվել է սպանության փորձի կասկածանքով, իսկ սեպտեմբերի 26-ին ներկայացվել է մեղադրանք: Նույն օրը Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է քննիչի միջնորդությունը նրա նկատմամբ երկու ամսով խափանման միջոց կալանք կիրառելու մասին: 14.11.2005թ.-ին քննիչը ներկայացրել է միջնորդություն կալանքի ժամկետը երկարաձգելու հիմքով, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը: 23.11.2005թ.-ին Ս. Ասատրյանի փաստաբանը որոշման պատճենը ներկայացրել է քրեակատարողական հիմնարկի պետին, սակայն վերջինս հրաժարվել է ազատ արձակել կալանավորին: Նույն օրը դատախազը բողոքարկել է առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարան: Դատարանը նիստը հրավիրել է 17:30-ին, սակայն հնարավոր չի եղել այդ օրն ավարտել դատական քննությունը, քանի որ Ս. Ասատրյանի առողջական վիճակը վատացել է: Դատարանը ստիպված էր դադարեցնել դատական նիստը երեկոյան 20:30-ին և տեղափոխել նիստը հաջորդ օրը ժամը 13:00-ին: Թեև Ս. Ասատրյանի կալանքի ժամկետը ժամը 17:50-ից սպառվել էր, սակայն նա ազատ չի արձակվել, այլ դատարան- նից տարվել է կալանավայր: Հաջորդ օրը Վերաքննիչ դատարանը վերսկսել է դատական նիստը ժամը 13:00-ին և որոշում է կայացրել երկարաձգել խափանման միջոց կալանքի ժամկետը ևս երկու ամսով: Ս. Ասատրյանը բողոքարկել է որոշումը՝ Վճռաբեկ դատարան, սակայն վերջինս վերադարձրել է բողոքը:	5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի խախտում:

57.	Հակոբյանն ու Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի	17.10.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-196605%22%7D%7D	<p><i>Հանրային գերակա շահ:</i> Դիմումատուների սեփականությունից զրկվելը չի կատարվել օրենքով նախատեսված պայմանների համաձայն:</p> <p>2000 թվականի նոյեմբերի 25-ին Կառավարությունն ընդունել է թիվ 774 որոշումը, որով հաստատել է Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված նախագիծը՝ Երևանի կենտրոնում կառուցելու պողոտա՝ Հյուսիսային պողոտան, որը կկապեր երկու հիմնական հրապարակները՝ Ազատության հրապարակը և Հանրապետության հրապարակը: 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով փոփոխություններ է կատարել 2001 թվականի հուլիսի 16-ի թիվ 645 որոշման մեջ և հաստատել է Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտին՝ 345 000 քմ ընդհանուր մակերեսով:</p> <p>Ծրագրի իրականացման գործընթացը կառավարելու նպատակով ստեղծվել է հատուկ մարմին՝ Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը (Գրասենյակ): 2005 թվականի սեպտեմբերի 27-ին Գրասենյակն առաջին դիմումատուին տեղեկացրել է, որ համապատասխան գույքը գտնվում է օտարման գոտում և ենթակա է վերցման՝ պետական կարիքների համար: Առաջին դիմումատուին առաջարկվել է փոխհատուցման առավելագույն չափը՝ գումարած ֆինանսական խրախուսում՝ 14 653 800 ՀՀ դրամ գումարի չափով, եթե վերջինս համաձայնի ստորագրել համաձայնագիր առաջարկն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, ստորագրի այդ համաձայնագիրը մեկ ամսվա ընթացքում և գույքը հանձնի այդ համաձայնագրով նախատեսված ժամկետում:</p> <p>ՄԻԵԴ-ը նախկինում քննել է ներպետական օրենսդրության նույն դրույթների կիրառմանն առնչվող բողոքներ Հայաստանի դեմ բերված բազմաթիվ գործերում և եկել է այն եզրահանգման, որ գույքից զրկելը չի կատարվել տվյալ ժամանակահատվածում գործող «օրենքով նախատեսված պայմանների» համաձայն (տե՛ս, ի թիվս այլ գործերի, Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի [Minasyan and Semerjyan v. Armenia], թիվ 27651/05, §§ 69-77, 2009 թվականի</p>	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
-----	---	------------	---	--	--

				հունիսի 23. Թունյանը և այլք ընդդեմ Հայաստանի, թիվ 22812/05, §§ 35-39, 2012 թվականի հոկտեմբերի 9): Դատարանը սույն գործի պարագայում այդ եզրահանգումից շեղում կատարելու որևէ պատճառ չի տեսել:	
58.	Վարդանյանն ու Նանուշյանն ընդդեմ Հայաստանի	27.10.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-167760%22%5D%7D https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-194609%22%5D%7D	Արդարադատության մատչելիություն և արդյունավետ գործունեություն. սեփականության պաշտպանություն, Իրավական որոշակիության սկզբունքի խախտում `դիմողների կողմից վերջնական ներպետական վճիռը` հողամասի նկատմամբ դիմումատուների սեփականության իրավունքը ճանաչելը բեկանելու պատճառով: Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի վարքի պատճառով անկողմնակալության սկզբունքի խախտում և զենքի հավասարության սկզբունքի խախտում `վերաքննիչ դատարանի կողմից նիստը հետաձգելը մերժելու պատճառով` դիմումատուն զրկվել է իր փաստարկները ներկայացնելու հնարավորությունից:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
59.	Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի	14.09.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-176930%22%5D%7D	Իշխանությունները չեն իրականացրել դիմումատուի` վատ վերաբերմունքի մասին պնդումների արդյունավետ քննություն: 2006 թվականի մայիսի 20-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով` ծանրացնող հանգամանքներում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտման և ծանրացնող հանգամանքներում սպանության համար: Մասնավորապես, քննիչը հանգել է այն եզրակացության, որ 2006 թվականի մարտ ամսին դիմումատուն Ռ.Ն.-ի հետ միասին Ա.Ն.-ին ծեծի է ենթարկել, իսկ 2006 թվականի ապրիլի 28-ին ծառից կախելով` սպանել է նրան: Դիմումատուն վիճարկել է գործի նյութերում արտացոլված փաստերը և պնդել է, որ իրեն Կապանի ռազմական ոստիկանության վարչություն են տեղափոխել 2006 թվականի մայիսի 1-ին և այնտեղ պահել են մինչև 2006 թվականի մայիսի 3-ը: Դրանից հետո իրեն տեղափոխել են Ռազմական ոստիկանության վարչության կարգապահական մեկուսարան, որտեղ պահել են մինչև 2006 թվականի մայիսի 20-ը: Այդ ամբողջ ընթացքում	3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

				<p>ռազմական ոստիկանության աշխատակիցներն ու քննիչներն իրեն ենթարկել են դաժան ծեծի ու խոշտանգումների, հարվածել են մարմնի փափուկ մասերին, ինչպես նաև «չերևացող» մասերին, այդ թվում՝ ներբաններին՝ ստիպելով նրան խոստովանել սպանություն կատարելու փաստը: Այդ ժամանակ իրեն իրավական ներկայացուցիչ չի տրամադրվել: Ռ.Չ.-ն և մեկ այլ ծառայակից, որոնք Ա.Չ.-ի մահվան փաստի առթիվ տեղափոխվել էին Ռազմական ոստիկանության վարչություն, նույնպես ծեծի են ենթարկվել: Ռ.Չ.-ն, չկարողանալով դիմանալ ծեծին, խոստովանական ցուցմունք է տվել:</p>	
60.	Այվազյանն ընդդեմ Հայաստանի	01.06.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-173768%22%5D%7D	<p>Գործը վերաբերում է դիմումատուի հոգեկան առողջության խնդիր ունեցող եղբոր սպանությունը ոստիկանական գործողությունների արդյունքում, որը չունեի բավարար պլանավորում: Համապատասխան մարմինները Սեյրան Այվազյանի մահվան հանգամանքների վերաբերյալ արդյունավետ քննություն չեն իրականացրել:</p>	<p>2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում այն առումով, որ համապատասխան մարմինները Սեյրան Այվազյանի մահվան հանգամանքների վերաբերյալ արդյունավետ քննություն չեն իրականացրել: Սեյրան Այվազյանի մահվան մասով տեղի է ունեցել 2-րդ հոդվածի էական խախտում:</p>
61.	Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի	26.04.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-111631%22%5D%7D	<p>2006թ. հոկտեմբերի 19-ին Դիմումատուի նկատմամբ քրեական գործ է հարուցվել 175-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով: Դիմումատուին դատական նիստերի ընթացքում մետաղական ձաղավանդակում են պահել և վերջինիս նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորել: Բացի այդ կալանքը նույնպես եղել է անօրինական:</p>	<p>3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 1-ին կետի առանց օրինական հիմքի կալանքի տակ պահելու առումով</p>

					<p>և 3-րդ կետի՝ գրավով ազատելու միջնորդության ինքնաբերաբեր մերժման առումով: 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ այն առումով, որ Լոռու ԸԻԴ-ում չի ապահովվել կողմերի հավասարությունը:</p>
62.	Դոմագյանն ընդդեմ Հայաստանի	25.02.2016	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-160824%22%5D%7D</p>	<p>2006 թվականի նոյեմբերի 1-ին Գ-ն դիմումատուի անունից ներկայացրել է հակընդդեմ հայց՝ պահանջելով անվավեր ճանաչել քաղաքապետի՝ 2006 թվականի հունիսի 19-ի որոշումը, քանի որ այն կայացվել էր ներպետական օրենսդրության խախտմամբ:</p> <p>Մինևս այն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը կայացրել է հակընդդեմ հայցը վարույթ չընդունելու և այն վերադարձնելու վերաբերյալ որոշում, այն հիմքով, որ վերջինիս ներկայացրած լիազորագիրը չէր համապատասխանում օրենքի պահանջներին, մասնավորապես՝ Քաղ. դատ. օր.-ի 41-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերին: Վարչական շրջանի դատարանը չի հստակեցրել, թե նշված որ իրավական դրույթի պահանջը չի պահպանվել, որի արդյունքում Գ-ի լիազորագիրը ճանաչվել է առոչինչ: Այնուամենայնիվ, Գ-ի լիազորագրին առնչվող խնդիրը նոտարի կողմից վավերացված չլինելն էր: ՄԻԵԴ-ը գտել է, որ տվյալ ժամանակահատվածում օրենքում չեն եղել հստակ կանոններ, որոնցով կսահմանվեր, թե անձի կողմից փաստաբանին տրված լիազորագիրն ինչ եղանակով պետք է ձևակերպվեր, այդ թվում՝ այն վավերացնելու ընթացակարգը: Հետևաբար, դիմումատուի հակընդդեմ հայցն ըստ էության քննության չընդունելու վերաբերյալ վարչական շրջանի դատարանի որոշման համար տվյալ ժամանակահատվածում գործող ներպետական օրենսդրությամբ ամրագրված չի եղել որևէ հստակ իրավական հիմք: Ի վերջո,</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:</p>

				Դատարանը նշում է, որ Քաղ. դատ. օր-ի համապատասխան դրույթների 2008 թվականի հունվարի 1-ի փոփոխությունների արդյունքում ներկայումս օրենքում ամրագրված է, որ փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ:	
63.	Մալխասյանն ընդդեմ Հայաստանի	26.05.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-111628%22%5D%7D	2006 թվականի դեկտեմբերի 2-ին դիմումատուն ելույթ է ունեցել «Հայ կամավորների միություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված հավաքում: 2006 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 301-րդ հոդվածի հատկանիշներով՝ իշխանությունը: բռնի զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու հիմքով: Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ, որը Դատարանը բավարարել է: 2006 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այս որոշման դեմ: Պնդումն առ այն, որ ինքը կարող էր խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը հերքվում էր այն փաստով, որ վարույթն իրականացնող մարմինն իր տրամադրության տակ ուներ դիմումատուի ելույթի ձայնագրությունը: Նման հանգամանքներում դիմումատուի համար անհնարին էր որևէ կերպ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: 2006 թվականի դեկտեմբերի 27-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ փորձելով գրավի դիմաց ազատ արձակվել, ինչը մերժվել է:	5-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի խախտում: Դիմումատուին 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը կալանքի տակ պահելը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

64.	Ավագյանն ընդդեմ Հայաստանի	22.11.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-187688%22%7D	<p>2007 թվականի հունվարի 2-ին երկու տարեց քույրեր՝ Մ.Գ.-ն և Վ.Գ.-ն, վերջինիս բնակարանում, որտեղ նրանք միասին ապրում էին, հայտնաբերվել են մահացած, որից հետո քրեական հետապնդման մարմինները սկսել են նրանց մահվան փաստի առթիվ քննություն: Ըստ երևույթին, դիմումատուն ճանաչել է Վ.Գ.-ին, որը 2006 թվականի ապրիլի 5-ին կտակ էր կազմել, համաձայն որի՝ նա իր բնակարանը կտակել էր դիմումատուին:</p> <p>Սույն գործով դիմումատուն առաջին ատյանի դատարանին հայտնել է, որ ինքը ցանկանում է դատարանում հարցաքննել փորձագետին մի շարք այնպիսի հարցեր պարզաբանելու համար, որոնք պահանջում են մասնագիտական գիտելիքներ: Առաջին ատյանի դատարանը մերժել էր դիմումատուի խնդրանքը՝ գտնելով, որ Ա.Գ.-ի կողմից ներկայացված առաջին եզրակացության բովանդակությունն արդեն իսկ պարզաբանվել էր դրան հաջորդող փորձագիտական եզրակացություններով, և հետևաբար փորձագետներին կանչելու անհրաժեշտություն չկար: ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուի՝ առաջին ատյանի դատարանում Ա.Գ.-ին, Ս.Ն.-ին և Ս.Ս.-ին լսելու խնդրանքն անհիմն չէր, այդ փորձագիտական եզրակացությունները գործի համար հիմնարար նշանակություն ունեին:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:
65.	«Շուլց Ազ» ընդդեմ Հայաստանի	24.01.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-189419%22%7D	Գործը վերաբերում է արդարադատության մատչելիությանը և արդյունավետ գործունեությանը. Դատարան դիմելու անհիմն և անհամաչափ սահմանափակում՝ կապված դիմումատու ընկերության քաղաքացիական հայցերը քննելու հետ:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
66.	Պողոսյանն ընդդեմ Հայաստանի	20.12.2011	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-108235%22%7D	Դիմումատուի նկատմամբ քրեական գործ է հարուցվել գողության և խարդախության համար: 2007թ. փետրվարի 15-ին մեղադրանք է առաջադրվել և հետախուզում հայտարարվել, քանի որ նա թաքնվում էր քննությունից: Նույն օրը Դատարանը բավարարել է քննիչի՝ կալանքի տակ պահելու միջնորդությունը՝ 2 ամիս ժամկետով: Ապրիլի 13-ին ձերբակալվել և տեղափոխվել է ոստիկանության բաժին, այնուհետև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: 2007թ. մայիսի 31-ին Դիմումատուն կալանքից գրավով ազատ արձակվելու միջնորդություն ներկայացրեց՝ նշելով, որ մեղադրանքի ծանրության	5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերի խախտում:

				<p>պատճառով գրավի դիմաց կալանքից ազատվելու իրավունք չունենալու փաստը հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին: Դատարանը մերժեց միջնորդությունը նշելով, որ առկա է քննությունից թաքնվելու վտանգ: 2007թ. հունիսի 12-ին գործն ուղարկվեց Արարատի մարզի ԸԻԴ: 2007թ. հունիսի 13-ին կալանքի տակ պահելու ժամկետը սպառվեց: 2007թ. հունիսի 15-ին դիմումատուն բողոք ներկայացրեց քրեակատարողական հիմնարկի պետին՝ պահանջելով իրեն ազատ արձակել, որը մերժվեց, այն հիմքով, որ գործն ուղարկվել է Դատարան: 2007թ հունիսի 29-ին Դիմումատուն մերժումը բողոքարկեց դատարան, որը նշեց, որ ազատ արձակելու մերժումն օրինական է: Վերաքննիչ քրեական դատարանը նույնպես մերժեց բողոքը:</p>	
67.	Թամրազյանն ընդդեմ Հայաստանի	19.03.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-201738%22%7D	<p>Գործը վերաբերում է անարդար վարչական վարույթին՝ կապված ՀՀ Տավուշի մարզի Թեղուտ գյուղի հարակից հողամասի՝ երրորդ անձի օտարման հետ, որը գտնվում էր դիմումատուի տիրապետման տակ քսաներեք տարի և որի մասով նա ներպետական օրենսդրության համաձայն, բարեխիղճ և բացահայտ տիրապետման ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք ուներ:</p> <p>ՄԻԵԴ-ը գտավ, որ Վճռաբեկ դատարանը, մերժելով դիմումատուի հայցը 2010 թ. Ապրիլի 2-ին, չկարողացավ համարժեք նշել գործող օրենսդրությունը, չանդրադարձավ դիմումատուի կողմից բերված կարևոր փաստարկներին և չպատճառաբանեց սեփական նախադեպային իրավունքը չկիրառելու հանգամանքը, որը և խախտեց դիմումատուի սեփականության իրավունքը:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
68.	Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի	16.05.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-192982%22%7D	<p>2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող հողատարածք պարունակող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Դիմումատուին պատկանել է 240,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինություն եւ Երեւանի կենտրոնում գտնվող՝ 437,8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով վարձակալությամբ [տրամադրված] հողակտոր, որի վրա գտնվում էր այդ շինությունը: Այդ</p>	1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				<p>գույքը ներառված էր պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտում: 2004 թվականի սեպտեմբերի 7-ին դիմումատուն համաձայնագիր է կնքել Գրասենյակի հետ, որով 265 020 ԱՄՆ դոլարի դիմաց հրաժարվել է իր գույքից: Պայմանագրով նախատեսվում էր նաեւ 78 006 ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական խրախուսում, որը պետք է վճարվեր դիմումատուին: Այսպիսով, վաճառքի ընդհանուր գումարը, ներառյալ օրենքով պահանջվող 15%-ը, կազմել է 394 479 ԱՄՆ դոլար, որից դիմումատուն ստացել է 355 031 ԱՄՆ դոլար, քանի որ 39 447 ԱՄՆ դոլարը գանձվել է որպես եկամտահարկ: Դիմումատուի ցուցմունքի համաձայն՝ վարույթի ընթացքում ինչ-որ պահի Գրասենյակի ղեկավարը պահանջել է նրանից հետ վճարել 180 000 ԱՄՆ դոլար, հակառակ դեպքում նա կարող էր քրեական պատասխանատվության ենթարկվել պետական միջոցները յուրացնելու համար: 2006 թվականի փետրվարի 3-ին դիմումատուն 75 820 000 ՀՀ դրամ (մոտավորապես 133 958 եվրո) է փոխանցել Գրասենյակի հաշվեհամարին: Դիմումատուն հետագայում պահանջել է, որ Գրասենյակը վերադարձնի դրա հաշվեհամարին վճարված 75 820 000 ՀՀ դրամը: 2007 թվականի ապրիլի 2-ին նա պատասխան է ստացել Գրասենյակի ղեկավարից, որում ասվել է, որ նա նշված գումարը փոխանցել է Գրասենյակի հաշվեհամարին՝ առանց որեւէ փաստաթղթային ապացույցի: Դիմումատուի խոսքերի համաձայն՝ դրանից հետո նա երկու անգամ կապ է հաստատել Գրասենյակի հետ՝ պահանջելով վերադարձնել դրա հաշվեհամարին փոխանցված գումարը, սակայն ոչ մի պատասխան չի ստացել: Դիմումատուն իր գույքից զրկվել է «Բխում է հանրային շահից» պայմանի խախտմամբ: Ներպետական դատարանները չեն ապացուցել, որ դիմումատուին իր գույքից զրկելն իրականացվել է՝ ելնելով հանրային շահից:</p>	
69.	Միբզոյանն ընդդեմ Հայաստանի	23.05.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-193081%22%5D%7D	<p>2007 թվականի ապրիլի 15-ին՝ երեկոյան 9:40-ին, Հ.Գ.-ն, հերթապահության սենյակում տեսնելով Գեղամ Սերգոյանին (դիմումատուի որդուն), վերջինիս նախատել է առանց թույլտվության [սենյակ] մտնելու եւ համազգեստ չկրելու, այդ թվում՝ զինվորական կոշիկների փոխարեն հողաթափեր կրելու համար: Թեեւ Գեղամ Սերգոյանն ընդունել է իր սխալը եւ փորձել է հեռանալ սենյակից, Հ.Գ.-</p>	<p>2-րդ հոդվածի խախտում: 13-րդ հոդվածի խախտում:</p>

				<p>ն նրան բանավոր վիրավորել է եւ բռնությամբ հրել դեպի պատը: Այնուհետեւ Չ.Գ.-ն իր ատրճանակն ուղղել է Գեղամ Սերգոյանի գլխին եւ կրակոց արձակել:</p> <p>Գործը վերաբերում է կյանքի իրավունքին և արդյունավետ պաշտպանության միջոցին: ՄԻԵԴ-ը արձանագրեց, որ իշխանությունները ձախողել են Դիմումատուի զինձառայող որդու կյանքը պաշտպանելը և այդ կորստի արդյունքում կրած ոչ նյութական վնասի համար մերժել են Դիմումատուի հայցը:</p>	
70.	Ամիրխանյան ն ընդդեմ Հայաստանի	03.12.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-158960%22	<p>2007 թվականի ապրիլի 12-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վերադարձնել դիմումատուի հակառակորդ կողմի՝ 2007 թվականի մարտի 26-ին բերած վճռաբեկ բողոքը, Քաղաքացիական վերաքննիչ դատարանի 2007 թվականի մարտի 9-ի դատական ակտն այլևս բողոքարկման ենթակա չէր և դարձել էր վերջնական ու պարտադիր ուժ ունեցող: Հետևաբար, միևնույն կողմի բերած մեկ այլ բողոքն ընդունելով և այնուհետև այն բավարարելով՝ Վճռաբեկ դատարանը բեկանել է վերջնական դատական ակտ: Դիմումատուի հակառակորդ կողմի հայցը մերժելիս Քաղաքացիական վերաքննիչ դատարանը գտել է, որ նա հրաժարվել է հողակտորի նկատմամբ իր սեփականության իրավունքներից դիմումատուի օգտին՝ այդպիսով հաստատելով, որ այդ հողակտորը հանդիսացել է դիմումատուի սեփականությունը: Այդ դատական ակտը վերջնական է դարձել 2007 թվականի ապրիլի 12-ին և կարող է համարվել «գույք»՝ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի կողմից այն հետազայում բեկանելը համարժեք է միջամտության՝ դիմումատուի գույքից անարգել օգտվելու իրավունքին, որը երաշխավորվում է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով:</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:</p> <p>1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:</p>
71.	Արզումանյան ն ընդդեմ Հայաստանի	11.01.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-179848%22	<p>Ներպետական դատարանները չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ՝ դիմումատուի նկատմամբ կալանք նշանակելու և դրա ժամկետը երկարաձգելու մասին իրենց որոշումների համար:</p> <p>2007 թվականի մայիսի 5-ին դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (փողերի լվացում): 2007 թվականի մայիսի 7-ին դիմումատուն</p>	<p>5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում :</p>

				<p>ձերբակալվել է, իսկ 2007 թվականի մայիսի 10-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը քննիչի միջնորդության հիման վրա կայացրել է դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու մասին որոշում՝ հաշվի առնելով վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը և այն հանգամանքը, որ ազատության մեջ մնալու դեպքում դիմումատուն կարող էր թաքնվել կամ խոչընդոտել քննությունը՝ անօրինական ազդեցություն գործադրելով դատավարությանը մասնակցող անձանց վրա: Դիմումատուն առարկություն է ներկայացրել այդ միջնորդության դեմ՝ պնդելով, որ քննիչը չի ներկայացրել որևէ հիմնավոր փաստարկ՝ ի հաստատումն այն պնդման, որ նա կարող էր թաքնվել կամ խոչընդոտել արդարադատության իրականացումը՝ հաշվի առնելով, որ նա նախկինում դատապարտված չի եղել, ունեցել է լավ բնութագիր, ունեցել է մշտական բնակության վայր և կայուն հասարակական կյանք է վարել, ինչպես նաև եղել է հայտնի հանրային անձ:</p>	
72.	Գուլյանն ընդդեմ Հայաստանի	20.09.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-186124%22%5D%7D	<p>2007թ. մայիսի 12-ին Լևոն Գուլյանը բազմաթիվ վնասվածքներով մահացած է հայտնաբերվել Երևանի ոստիկանության կենտրոնական մասնաշենքի բակում: ՄԻԵԴ-ը գտել է, որ իրականացված հետաքննությունն այն աստիճան ակնհայտորեն անբավարար է եղել և այնքան ակնհայտ հարցեր է թողել առանց պատասխան, որ չէր կարող պարզել հայցվորի որդու մահվանը վերաբերյալ իրական փաստերը: Այդ առնչությամբ՝ դատարանը չի կարող հիմնվել հետաքննության վերջում ձեռքբերված եզրակացության վրա: Դատարանը վճռել է, որ կառավարությունը չի տրամադրել բավարար և համոզիչ բացատրություն կալանքի տակ գտնվելու ժամանակ Գուլյանի մահվան վերաբերյալ և գտել է, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ կյանքի իրավունքի վերաբերյալ 2-րդ հոդվածի խախտում:</p>	2-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական խախտում:
73.	Մեֆիլյանն ընդդեմ Հայաստանի	02.10.2012	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-113296%22%5D%7D	<p>Գործը վերաբերում է առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելուն և կալանքի ժամկետի շարունակական երկարացման վերացական և կարծրատիպային հիմքերի մատնանշմանը:</p>	5-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի խախտում: Դիմումատուին 2007 թվականի

					<p>հունիսի 10-ից 22-ը կալանքի տակ պահելը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:</p> <p>5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում կալանքի բավարար հիմքեր չեն եղել:</p> <p>5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում այն առումով, որ Դատաանում չի ապահովվել կողմերի հավասարությունը:</p> <p>8-րդ հոդվածի խախտում:</p>
74.	Ղույումչյանն ընդդեմ Հայաստանի	21.01.2016	https://hudoc.echr.coe.int/eng#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-160090%22]}	<p>2007 թվականի հունիսի 28-ին Վճռաբեկ դատարանի աշխատակազմի գրասենյակի պետը գրությամբ վերադարձրել է դիմումատուի վճռաբեկ բողոքը՝ իրագեկելով նրան, որ նրա բողոքը վարույթ չի ընդունվել այն հիմքով, որ այն չի ներկայացվել Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն: Դատարանում դիմումատուները պնդել են, որ իրենց ընտանիքը այդպիսի փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորություն չի ունեցել:</p> <p>Դիմումատուին գրկել են Վճռաբեկ դատարանի մատչելիությունից՝ այն հիմքով, որ իր վճռաբեկ բողոքը չի բերվել այդ դատարանում</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:</p>

				<p>հավատարմագրված փաստաբանի միջոցով: Արդարադատության մատչելիություն. դատավարական պահանջ կարող էին ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում գործելու արտոնագիր ստացած փաստաբանները, իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորության բացակայության դեպքում, վճռաբեկ դատարանի մուտքը պայմանավորվում էր դիմումատուի ֆինանսական դրությամբ՝ դրա արդյունավետության անհամաչափ սահմանափակումով:</p>	
75.	Սահակյանն ընդդեմ Հայաստանի	10.11.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-158481%22%5D%7D	<p>2007 թվականի օգոստոսի 30-ին դիմումատուն ձերբակալվել է, իսկ այնուհետև նրան մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հիմքով:</p> <p>Սույն գործում ներպետական դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ 2007 թվականի հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 22-ը դիմումատուին կալանքի տակ պահելն իրականացվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտմամբ (տե՛ս վերը նշված § 10-ը): Ուստի, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է նրա գործում: Այնուամենայնիվ, ներպետական դատարանները մերժել են նրա՝ ոչ նյութական վնասի հատուցման քաղաքացիական հայցը, այն հիմքով, որ «ոչ նյութական վնասի հատուցումը» Հայաստանի օրենսդրությամբ որպես հատուցման տեսակ նախատեսված չի եղել:</p>	5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:
76.	Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի	16.11.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-178517%22%5D%7D	<p>Իշխանությունները բավարար ջանասիրությամբ և հոգատարությամբ չեն գործել՝ պարզելու համար դիմումատուի դստեր մահվան պատճառը, որը 2007 թ. Սեպտեմբերի 7-ին, հղի լինելով, շտապ օգնության բժշկի կողմից երկու ներարկում կատարելուց հետո մահացել է հիվանդանոցում 2007 թ. Սեպտեմբերի 14-ին:</p> <p>Այս կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել, սակայն պարզվել է, որ շտապօգնության անձնակազմը պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերել: Ինչ վերաբերում է փոխհատուցմանը, ըստ օրենքի, դիմումատուն ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու հնարավորություն չունի:</p> <p>Ինչ վերաբերում է նյութական վնասին, դա կախված էր չհարուցված քրեական դատավարության արդյունքներից (2-րդ հոդվածի դատավարական խախտում):</p>	2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

77.	Միմոնյանն ընդդեմ Հայաստանի	07.04.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-161801%22%7D	<p>2007 թվականի հունվարի 19-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը 2007 թվականի հոկտեմբերի 10-ին Վճռաբեկ դատարանը բեկանել է, ինչի հետևանքով խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը: Ավելին, այդ վճռով հաստատվել է տան և հողակտորի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը, ինչը չեղարկվել է բեկանման հետևանքով: Ուստի տեղի է ունեցել միջամտություն՝ իր գույքից անարգել օգտվելու դիմումատուի իրավունքին, ինչը չի եղել օրինական: Ընդդեմ Հայաստանի բերված մեկ այլ գործով այն արդեն քննել է կողմերի ներկայացրած համանման բողոքներ և փաստարկներ և գտել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված երաշխիքների խախտում (տե՛ս վերը հիշատակված Ամիրխանյանի գործը, §§ 34-40 և §§ 46-48):</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
78.	Թովմասյանն ընդդեմ Հայաստանի	21.01.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-160091%22%7D	<p>Ռեհան Թովմասյանին 1991 թվականի հոկտեմբերի 10-ին հատկացվել է բնակարան «Կանազ» գործարանի միջոցներով կառուցվելիք նոր շենքում: Խորհրդային Միության փլուզումից հետո այս ընկերությունը սնանկացել է, իսկ շինարարության աշխատանքները դադարեցվել: Թովմասյանը փորձել է բնակարան ստանալ կամ փոխհատուցում և պարտվել է դատական աստաններում, իսկ այնուհետև չի կարողացել Վճռաբեկ ատյանում բողոք ներկայացնել, քանի որ համապատասխան ֆինանսական միջոցներ չի ունեցել, իսկ փաստաբանները, ում դիմել է, չեն ցանկացել նրան իրավական օգնություն ցուցաբերել անվճար հիմունքներով:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
79.	Շամոյանն ընդդեմ Հայաստանի	07.07.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-155811%22%7D	<p>2007 թվականի նոյեմբերի 12-ի գրությամբ Վճռաբեկ դատարանի դատական նիստերի գլխավոր քարտուղարը վերադարձրել է դիմումատուի բողոքը՝ իրազեկելով նրան, որ իր բողոքը վարույթ չի ընդունվել այն հիմքով, որ չի բերվել Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով: Դիմումատուին զրկել են Վճռաբեկ դատարանի մատչելիությունից՝ այն հիմքով, որ իր վճռաբեկ բողոքը չի բերվել այդ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով: Դատավարական պահանջ կարող էին ներկայացնել միայն վճռաբեկ դատարանում գործելու արտոնագիր ստացած փաստաբանները, իրավաբանական օգնություն</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

				տրամադրելու հնարավորության բացակայության դեպքում, վճռաբեկ դատարանի մուտքը պայմանավորվում էր դիմումատուի ֆինանսական դրությանը՝ դրա արդյունավետության անհամաչափ սահմանափակումով:	
80.	«Չափ» ՍՊԸ ընդդեմ Հայաստանիի	04.05.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-173366%22%7D%7D	Արդարադատության մատչելիություն և արդյունավետ գործունեություն. Անարդար դատավարություն կապված դիմումատուի՝ վկաներին հարցաքննելու իրավունքի անհիմն սահմանափակման հետ, ում ցուցմունքները որոշիչ դեր խաղացին նրա դատապարտման ապահովման գործում: 2007 թվականի նոյեմբերի 12-ի իր հաշվետվության մեջ նշված գումարի հետ կապված որևէ վճարում դիմումատու ընկերության կողմից չստանալով՝ ՀՊԾ-ն 2007 թվականի նոյեմբերի 26-ին հայց է ներկայացրել Տնտեսական դատարան՝ դիմումատու ընկերությանը որպես հարկային պարտք 25 212 800 ՀՀ դրամ (մոտավորապես 50 000 եվրո) վճարելուն պարտավորեցնելու և նրա բանկային հաշիվներն ու մյուս ակտիվները ենթադրյալ հարկային պակասորդի չափով սառեցնելու համար: 2007 թվականի դեկտեմբերի 24-ին դիմումատու ընկերության գործը տեղափոխվել է Վարչական դատարան: 2008 թվականի մարտի 12-ին իմումատու ընկերության փաստաբանը Վարչական դատարանին խնդրել է կանչել, inter alia, համապատասխան ընկերությունների այն ղեկավարներին և գործարարներին, մասնավորապես, Ա. Ջ.-ին, Ս. Ա.-ին, Ս. Մ.-ին, Հ. Պ.-ին, Գ. Ս.-ին, Գ. Ա.-ին և Հ. Մ.-ին, որոնց հայտարարություններին ՀՊԾ-ն հղում էր կատարել իր հաշվետվության մեջ: Նույն օրը ներկայացված մեկ այլ միջնորդությամբ փաստաբանը Վարչական դատարանին խնդրել է կանչել Գր. Ա.-ին՝ ՀՊԾ-ին նրա կողմից տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի վերաբերյալ ցուցմունք տալու և այդ փաստաթղթերի վավերականությունը հաստատելու համար: Վարչական դատարանը մերժել է դիմումատու ընկերության միջնորդությունները՝ համարելով, որ տվյալ վկաների ցուցմունքները չեն առնչվում գործին:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ:
81.	Մինասյանն ընդդեմ	08.04.2014	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%22itemid%22:%7B%22001-173366%22%7D%7D	Առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելը և կալանքի նկատմամբ դատական վերահսկողության մերժումը միայն այն	5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում

	Հայաստանի		2:[%22document%22], %22itemid%22:[%22001-142189%22]}	<p>հիմքով, որ գործն արդեն մինչդաստական վարույթում չէ: Դատարանի կողմից կալանքի միջնորդությունների բավարարումը տեղի է ունեցել կալանքի հիմքերի վերացական և կարծրատիպային ձևակերպումներով, ինչի արդյունքում բացահայտված չեն քննությունից թաքնվելու և գործով անցնող այլ անձանց վրա ճնշում գործադրելու իրական հանգամանքները:</p> <p>2007 թվականի դեկտեմբերի 18-ին քրեական գործ է հարուցվել՝ հիմք ընդունելով այդ օրը հրազենի կիրառմամբ անձանց երկու խմբերի միջև տեղի ունեցած կռիվը: Կռվի արդյունքում զոհվել է մեկ անձ, ևս երկուսը վիրավորվել են: Կռվին մասնակցելուց հետո դիմումատուն թաքնվել է, և նրա դեմ հետախուզում է հայտարարվել: 2007 թվականի դեկտեմբերի 22-ին դիմումատուն ինքնակամ ներկայացել է ոստիկանություն: Նա հանձնել է իր երկու ատրճանակները և նշել, որ դրանք օգտագործել է՝ կռվի ընթացքում անհայտ անձանց հարձակումից պաշտպանվելու նպատակով: Նրան ձերբակալել են և արգելանքի վերցրել:</p>	<p>2008 թվականի հոկտեմբերի 7-ից 15-ը դիմումատունին կալանքի տակ պահելու համար իրավական հիմք առկա չլինելու առումով:</p> <p>5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում՝ հաշվի առնելով դիմումատուի՝ կալանքի դեմ 2008 թվականի սեպտեմբերի 22-ին բերված բողոքի ուսումնասիրությունը մերժելը:</p>
82.	«Ֆիլ» Սպը ընդդեմ Հայաստանի	31.01.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22], %22itemid%22:[%22001-189589%22]}	<p>Գործը վերաբերում է ողջամիտ ժամկետում գործի քննությանը և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցին:</p> <p>2008 թվականի հունվարի 18-ին Դիմումատու Ընկերությունը հայց է ներկայացրել Դատարան՝ իր կատարած շինարարական աշխատանքների համար վճարման ենթակա գումարը Հաճախորդից բռնագանձելու պահանջով: Նույն թվականի հունվարի 21-ին Դիմումատուի ներկայացրած հայցի հիման վրա վարույթ է հարուցվել: Գործի շրջանակներում ներպետական դատական ատյանները հինգ շինարարատեխնիկական փորձաքննություն են նշանակել: Այնուամենայնիվ, փորձաքննության իրականացումը բազմիցս հետաձգվել է՝ համապատասխան ոլորտի փորձագետի բացակայության, ինչպես նաև՝ Ընկերության կողմից շինարարական աշխատանքներ իրականացրած տարածք մուտք գործելու անհնարինության և այլ պատճառներով: Փորձաքննությունների</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, 13-րդ հոդվածի խախտում:</p>

				եզրակացությունները Դատարան են ներկայացվել մի քանի տարի անց՝ 2015 թվականին: Այսպիսով, սույն գործի քննությունը երկարաձգվել է մինչև 2017 թվականը՝ տևելով 9 տարի և 2 ամիս:	
83.	Հովհաննիսյան ընդդեմ Հայաստանի	20.07.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-175488%22%5D%7D	<p>2008 թվականի փետրվարի 10-ին դիմումատուն բերվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան, որը քննել և բավարարել է քննիչի՝ նրան կալանավորելու մասին միջնորդությունը: Այսպես վարվելով՝ Վարչական շրջանի դատարանը, ողջամիտ կասկածի առկայությունից բացի, որպես նրա կալանավորումը հիմնավորող հիմք է համարել դիմումատուի՝ թաքնվելու ու տուժողի և (կամ) վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով քննությունը խոչընդոտելու ռիսկը: Վարչական շրջանի դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական և կարծրատիպային ձևով այդ հիմքերը նշելով՝ չներկայացնելով որևէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմումատուի գործով, և իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ (տե՛ս վերևում՝ 13-րդ պարբերությունը): Չի ներկայացվել որևէ բացատրություն այն հարցի վերաբերյալ, թե ինչու է դատարանը քննիչի միջնորդությունը հիմնավորված համարել, և ինչու է դա անհրաժեշտ եղել՝ չնայած այն հանգամանքին, որ իր բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունն արդեն կիրառվել էր դիմումատուի նկատմամբ մշտական բնակության վայր ունենալու, քննությունը չխոչընդոտելու հիմքով և այն հիմքով, որ ազատության մեջ մնալու դեպքում նա չէր թաքնվի կամ խոչընդոտի քննությունը: Նույնիսկ խափանման այդ միջոցը վերացվել է մի քանի օր հետո: Վարչական շրջանի դատարանը հաշվի չի առել այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են քննության ընթացքում դիմումատուի վարքագիծը և անձնական բնույթի հանգամանքները, ինչպես նաև ցանկացած այլ վերաբերելի գործոն: Այն նաև չի ուսումնասիրել դիմումատուի կողմից արված որևէ առարկություն կամ չի դիտարկել նրան գրավով ազատ արձակելու հնարավորությունը: տասնմեկ ամիս կալանքի տակ գտնվելուց հետո դիմումատուն դատապարտվել է և նրա նկատմամբ նշանակվել է 2</p>	5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

				տարի ազատագրկման ձևով պատիժ: Նշված ժամանակահատվածում չի ներկայացվել որևէ հիմնավորում այն մասին, թե ինչու հնարավոր չի եղել նրան ազատ արձակել նախնական քննության կամ դատական քննության ընթացքում:	
84.	Ջհանգիրյանն ընդդեմ Հայաստանի	08.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-204811%22%7D	Գործը վերաբերում է դիմումատուի ձերբակալությանը, ներառյալ վերջինիս օրինականությանը և հիմնավորվածությանը, ողջամիտ կասկածին, ինչպես նաև կալանքի համար անհրաժեշտ և բավարար հիմքեր չներկայացնելուն, դատարանի անաչառության բացակայությունը և հավաքների ազատության իրավունքին: Գազիկ Ջհանգիրյանն դատապարտվել էր 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո՝ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու համար և դատապարտվել ազատագրկման: 2008 թ. Փետրվարի 22-ին դիմումատուն ելույթ ունեցավ Ազատության հրապարակում կայացած հանրահավաքում, որում նա իր գորակցությունը հայտնեց պրն Տեր-Պետրոսյանին և քննադատեց նախագահական ընտրությունների անցկացումը՝ մեղադրելով տարբեր տեսակի խախտումների մեջ: 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Վճռաբեկ դատարանը բեկանել էր նրա վերաբերյալ դատավճիռը, ճանաչել նրա անմեղությունը և արդարացրել նրան: Քրեական գործի վարույթը կարճվել էր հանցակազմի բացակայության հիմքով:	<p>5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված դիմումատուի ձերբակալման օրինականության հետ:</p> <p>5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի խախտում այն հիմքով, որ դիմումատուի ձերբակալումը հիմնված չէ ողջամիտ կասկածի վրա:</p> <p>5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում այն իմաստով, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել համապատասխան և բավարար պատճառներ դիմումատուի</p>

					<p>կալանքի համար:</p> <p>6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դատարանի անաչառության մասով:</p> <p>11-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմումատուի հետապնդման և դատապարտման հետ:</p>
85.	Ջհանգիրյանն ընդդեմ Հայաստանի	18.05.2021	https://hudoc.echr.coe.int/eng#{%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-210037%22]}	<p>2008-ի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Ընտրություններից հետո ընդդիմությունը, ընդդիմության հիմնական թեկնածու Լեոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, սկսեց զանգվածային բողոքի ցույցեր անցկացնել: 2008 թ. փետրվարի 22-ին դիմումատուի եղբայրը՝ Գ.Ջ.-ն, որն այդ ժամանակ գլխավոր դատախազի տեղակալ էր, Ելույթ ունեցավ Երևանում անցկացված ընդդիմության հանրահավաքում: Հաջորդ օրը գործող նախագահը հրամանագիր արձակեց նրան գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնից ազատելու մասին:</p> <p>Դիմումատուին, ով տառապում էր ողնաշարի տուբերկուլյոզով և ուներ շարժունակության խնդիրներ, ոստիկանությունը կանգնեցրել է մեքենա վարելիս և ձերբակալել: Դրանից հետո հետապնդվել և դատապարտվել է ոստիկանության սպայի նկատմամբ բռնություն գործադրելու համար: Գործը վերաբերում է դիմումատուի նկատմամբ՝ ձերբակալման ընթացքում բիրտ ուժ գործադրելու մեղադրանքներին, իշխանությունների կողմից արդյունավետ հետաքննություն չիրականացնելուն, կալանքի տակ պահելու ժամկետին և համարժեք բժշկական օգնության բացակայությանը և դատական նիստերին հարկադիր մասնակցությանը՝ չնայած վատ առողջությանը:</p>	<p>3-րդ հոդվածի խախտում՝ ոստիկանության գործողությունների ընթացքում դիմումատուի նկատմամբ կիրառված ուժի մասով:</p> <p>3-րդ հոդվածի խախտում՝ կալանքի տակ պահելու ընթացքում դիմումատուին տրամադրվող բժշկական օգնության որակի մասով:</p>

				Դիմումատուի բողոքները վերաբերում են նաև նրա կալանքի օրինականությանը:	<p>3-րդ հոդվածի խախտում՝ դիմումատուի կալանքի պայմանների մասով:</p> <p>3-րդ հոդվածի խախտում՝ դիմումատուի՝ առաջին ատյանի դատարան տեղափոխման պայմանների և դատարանի առջև լուսմներին դիմումատուի մասնակցության մասով:</p> <p>5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:</p>
86.	Սմբատ Այվազյանն ընդդեմ Հայաստանի	08.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%2C%22itemid%22:%5B%22001-204812%22%5D%7D	<p>Գործը վերաբերում է Դիմումատուի կալանքի օրինականությանը, ներպետական դատարանների կողմից կալանքի համար անհրաժեշտ և բավարար պատճառներ չներկայացնելուն, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի երաշխիքների խախտմամբ կալանքի դեմ բողոքարկման քննությունը մերժելուն, դիմումատուի դատավարության անարդարությունը և վկաներ կանչելու նրա իրավունքի խախտմանը:</p> <p>Դիմումատուն, նախկինում Հայաստանի խորհրդարանի անդամ, ով նախկինում զբաղեցնում էր տարբեր պաշտոններ, ընդդիմադիր կուսակցության քաղխորհրդի անդամ էր և պարոն Տեր-Պետրոսյանի թեկնածության ջատագով: Նա հանրահավաքների ակտիվ մասնակից</p>	<p>5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, քանի որ դիմումատուի կալանքը 2008 թ. հուլիսի 15-ից 22-ը անօրինական էր:</p> <p>5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, քանի որ ներպետական</p>

			<p>էր, պարբերաբար մասնակցում էր ցույցերին: Դիմումատուն 2008 թվականի փետրվարի 23-ից 24-ի գիշերն անցկացրել է Ազատության հրապարակում:</p> <p>Սմբատ Այվազյանը դատապարտվել էր 2008 թվականի մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ՝ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու համար և դատապարտվել ազատազրկման:</p> <p>Մույն գործով, ներպետական դատարանը որոշում կայացրեց գործը դատաքննության նշանակելու մասին 2008 թ. հուլիսի 14-ին, սակայն որոշում չկայացրեց դիմումատուի շարունակական կալանքի վերաբերյալ, որն ավարտվեց 2008 թ. հուլիսի 15-ին: Այսպիսով, առկա չէր Դիմողի կալանքը թույլատրող որևէ դատարանի որոշում մինչև 2008 թ. հուլիսի 22-ը, երբ դատարանը վերջապես անդրադարձավ այդ հարցին: Դատարանը, և Կառավարությունը հիմնավորեցին դիմումատուի շարունակական կալանքի որոշում չկայացնելը տպագրական սխալով և պնդեցին, որ այդ հարցն իրոք լուծվել է և կայացվել է 2008 թ. Հուլիսի 14-ին: Գործի նյութերում չկար որևէ նյութ, որը կհաստատեր, որ դիմումատուի շարունակական կալանքի հարցը քննող դատավորը լուծել է 2008 թ. Հուլիսի 14-ի որոշումը կայացնելիս: Դրանից բխում է, որ 2008 թ. Հուլիսի 15-ից 22-ն ընկած ժամանակահատվածում չի եղել դատարանի որոշում, որը թույլատրում էր դիմումատուի կալանքը: ՄԻԵԴ-ը ընդգծել է, որ տպագրական սխալին գուտ հետադարձ հղումը չի կարող համարվել այդ իրավիճակը շտկող: Ներպետական դատարանը նաև չի ունեցել համապատասխան և բավարար պատճառներ դիմումատուի կալանքի համար: Դիմումատուին առաջադրված մեղադրանքը հիմնված էր վիճարկվող իրադարձություններում ակտիվորեն ներգրավված երեք ոստիկանների ցուցմունքների վրա: Վկաներ կանչելու դիմումատուի խնդրանքները, որոնք բավարար չափով հիմնավորված էին և անմիջականորեն առնչվում էին իրեն առաջադրված մեղադրանքին, առաջին ատյանի դատարանը մերժեց շատ կարճ և անհամոզիչ պատճառաբանությամբ:</p>	<p>դատարանները չկարողացան համապատասխան և բավարար պատճառներ ներկայացնել դիմումատուի կալանքի համար:</p> <p>5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում, առ այն, որ կալանքի դեմ 2008 թ. Հունիսի 24-ի դիմումատուի բողոքի քննությունը մերժվել է:</p> <p>6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ կապված դիմումատուի դատավարության արդարության հետ:</p> <p>11-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմումատուի հետապնդման և դատապարտման հետ:</p>
--	--	--	---	--

87.	Գասպարին ընդդեմ Հայաստանի	20.09.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-186115%22%7D	<p>2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ: Այս կապակցությամբ բողոքի ցույցերն ի վերջո դադարեցվել են 2008 թվականի մարտի 1-ին՝ ռուսիկանության միջամտությունից հետո, ինչը հանգեցրել է ցուցարարների ու իրավապահ մարմինների ծառայողների միջուկայինների եւ բազմաթիվ ձերբակալությունների: 2008 թվականի մարտի 1-ին դիմումատուն, ով, ըստ էության, ռուսիկանության կողմից միջամտության ժամանակ մոտ է եղել բողոքի ցույցի հիմնական վայրին, տարվել է ռուսիկանության բաժանմունք՝ ռուսիկանության ծառայողի վրա հարձակվելու կասկածանքով: Գործը վերաբերում է Նուբարաշենի քննչական մեկուսարանում 2008 թ. կալանքի պայմաններին և նվաստացուցիչ վերաբերմունքին:</p> <p>2008 թվականի նոյեմբերին Դատարանը Դիմումատու Գասպարին ռուսիկանության սպայի վրա հարձակում գործելու համար մեղավոր ճանաչելու և նրան 1 տարվա ազատազրկման դատապարտելու մասին վճիռ է կայացրել: 2009 թվականի փետրվարին Դիմումատուն ազատ է արձակվել: Դիմումատուն բողոքել է բանտախցերի գերբնակեցման, լուսավորության անբավարար մակարդակի և կալանավայրում հիգիենայի վատ պայմանների մասին: Գասպարին իր բողոքի մեջ նշել է, որ բանտի գերբնակեցման պատճառով բանտակիցները երբեմն ստիպված են եղել հերթականությամբ քնել, և բանտակիցների օգտագործած ծխախոտի ծուխը բացասական ազդեցություն է թողել իր առողջության վրա: Դիմումատուն բողոքել է օրինական հիմքերի բացակայության պայմաններում իրեն կալանավորելու որոշման մասին:</p>	<p>3-րդ հոդվածի խախտում 4, 9, 20, 29, 42 խցերի պահման պայմանների մասով:</p> <p>5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:</p>
-----	---------------------------	------------	---	--	--

88.	Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի	20.09.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-186114%22%7D%7D	<p>2008-ի նախագահական ընտրությունների նախնական արդյունքների հրապարակումից հետո ընդդիմության հիմնական թեկնածուն իր համակիրներին կոչ արեց հավաքվել Ազատության հրապարակում՝ բողոքելու ընտրական գործընթացում ենթադրյալ անօրինականությունների դեմ: 2008-ի փետրվարի 20-ից սկսած անցկացվում էին ամենօրյա հանրահավաքներ: Դիմումատուն հանրահավաքների ակտիվ մասնակից էր: 2008 թ. Մարտի 1-ի վաղ առավոտյան զինված ոստիկանության մոտ 800 աշխատակիցներ ցրեցին ցույցը: Դիմումատուն դատապարտվել է երկու մեղադրանքներով՝ ոստիկանի նկատմամբ բռնություն գործադրելու և ապօրինի զենք կրելու համար: ՄԻԵԴ-ին չեն համոզել այն փաստարկները, որ Սաղաթեյանի մարմնին և գլխին հայտնաբերված վնասվածքներն առաջացել են ոստիկանության եւ ցուցարանների միջև բախումների արդյունքում, ինչը պաշտոնապես հայտարարվել էր, և եկել է եզրակացության, որ այն դաժան վերաբերմունքի արդյունք է: Ավելին՝ պաշտոնական հետաքննություն չի անցկացվել, որպեսզի ուսումնասիրվեն Սաղաթեյանի պնդումներն այն մասին, որ իր վնասվածքները ոստիկանության կողմից դաժան վերաբերմունքի հետևանք են: ՄԻԵԴ-ի կարծիքով՝ կալանքն անօրինական էր, քանի որ առաջին 16 ժամվա ընթացքում այն չէր հաստատվել: Կալանքը պաշտոնապես հաստատվել էր թույլատրելի ժամկետից միայն 12 ժամ անց՝ կասկածյալին դատարան ներգրավելու ազգային օրենսդրության համաձայն: Իշխանությունները չեն կարողացել պատշաճ կերպով հիմնավորել Սաղաթեյանի կալանքը: Դատարանը որոշել է, որ խախտվել է նաև 6 § 1 հոդվածը (արդար դատաքննության իրավունք), քանի որ նրա դեմ քրեական դատավարությունն, ընդհանուր առմամբ, անարդարացի էր: Մասնավորապես դատարանը հիմնվել է ոստիկանության ցուցմունքի վրա, միննույն ժամանակ, մերժելով գործի անհամապատասխանության եւ պաշտպանական կողմի վկաներին կանչելու վերաբերյալ մեղադրյալի երկու պնդումները: Եվ վերջապես ՄԻԵԴ-ը որոշել է, որ խաղաղ հանրահավաքի ցրումը, դրան հաջորդող շրջափակումն ու ակտիվիստների ձերբակալությունը, որոնցից էր Սաղաթեյանը, անհամաչափ էին և անտեղի: Ինչպես նշված է ՄԻԵԴ հաղորդագրության մեջ, «ըստ երևույթին, նա,</p>	<p>3-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական խախտում, 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում ձերբակալման օրինականության մասով, 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում այն հիմքով, որ կալանավորման համար բավարար հիմքեր չեն ներկայացվել, 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում դատական քննության արդարացիության առնչությամբ, 11-րդ հոդվածի խախտում:</p>
-----	------------------------------------	------------	---	---	---

				<p>փաստորեն, ի սկզբանե ձերբակալվել և դատական հետապնդման է ենթարկվել միայն այն պատճառով, որ մասնակցել է ցույցին, մինչդեռ նրա վերջնական դատավճիռը դատարանը կայացրել է առանց պատշաճ քննության: Մրանով ոչ միայն խախտել է Կոնվենցիայի համաձայն նրա խաղաղ ժողովների ազատության իրավունքը, այլև կարող էր նրան և մյուսներին խոչընդոտել ապագայում ցույցերի մասնակցելուն:</p>	
--	--	--	--	---	--

89.	Այվազյանն ընդդեմ Հայաստանի	18.10.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-186786%22%7D	<p>2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ, որին հաջորդել են փետրվարի 20-ից սկսած ամեն օր Երևանի Ազատության հրապարակում ընդդիմության հիմնական թեկնածուի աջակիցների կողմից անցկացվող բողոքի ցույցերը: 2008 թվականի մարտի 1-ին Ազատության հրապարակում հավաքը ցրվել է ոստիկանության կողմից: Դիմումատուն, որն այդ ժամանակ եղել է Ազատության հրապարակում, ձերբակալվել է և ավելի ուշ դատապարտվել Քրեական օրենսգրքի (ՔՕ) 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով: Սույն գործով ներպետական դատարանները վերացականորեն են հիմնավորել դիմումատուի շարունակական կալանավորումը՝ միայն մեջբերելով ներպետական օրենսդրության համապատասխան իրավական սկզբունքները և անդրադառնալով հանցագործության ծանրությանը՝ առանց ներկայացնելու նրա գործի հատուկ փաստերը կամ ներկայացնելու մանրամասներ առ այն, թե ինչպես են հիմնավորվում թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ կրկին հանցագործություն կատարելու ռիսկերը: Ներպետական դատարանները չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ դիմումատուին կալանավորելու համար: 2008 թվականի մայիսի 1-ից 13-ն դիմումատուին կալանքի տակ պահելը օրենքով նախատեսված կարգով չի թույլատրվել դատարանի կողմից և հետևաբար անօրինական է եղել, այսպիսով ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ 2008 թվականի մայիսի 1-ից 13-ը դիմումատուի նկատմամբ կիրառված կալանքը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով օրինական չի եղել:</p>	<p>5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:</p> <p>5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:</p>
90.	Տեր-Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի	25.04.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-192653%22%7D	<p>Գործը վերաբերում է Նախագահ Տեր-Պետրոսյանի՝ 2008թ.-ի նախագահական ընտրություններին հաջորդած հետընտրական շրջանում բողոքի խաղաղ հավաքների իրավունքի խախտմանը, ինչպես նաև՝ այդ խախտումների դեմ Հայաստանում արդյունավետ պաշտպանության միջոցների բացակայությանը, Ազատության հրապարակում ձերբակալության և ազատ տեղաշարժի սահմանափակմանը 2008թ.-ի մարտի 1-ից մինչև 20-ը ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև քաղաքական հայացքների</p>	<p>11-րդ հոդվածի խախտում:</p> <p>13-րդ հոդվածի խախտում 11-րդ հոդվածի համադրությամբ:</p>

				հիմքով խտրականությանը:	
91.	Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի	10.10.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7B%22itemid%22:%7B%22001-196375%22%7D%7D	Դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործըով մեղադրանք էր առաջադրվել Ազատության հրապարակում իր կողմից ենթադրաբար կատարված որոշ արարքների համար, որը ամբողջովին կառուցված էր ոստիկանության՝ վիճարկվող դեպքերին ակտիվորեն ներգրավված ծառայողների վկայությունների վրա, որոնց ցուցմունքները պարունակել են անհամապատասխանություններ, այդ թվում՝ դիմումատուի ձեռքակալման վայրի վերաբերյալ: Դեպքերի վերաբերյալ ոստիկանության ծառայողների վկայությունները անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներին պատշաճ կերպով չանդրադառնալը և պաշտպանության կողմի վկաներին քննելը մերժելը՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմումատուի դատաքնության՝ արդար լինելու առնչությամբ: 11-րդ հոդվածի խախտում:
92.	Գասպարին ընդդեմ Հայաստանի	26.03.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7B%22itemid%22:%7B%22001-201888%22%7D%7D	Դիմումատուի դեմ քրեական գործը, որով նա մեղադրվում էր Ազատության հրապարակում հավաքի հետ կապված իբր կատարված որոշ արարքների համար, ամբողջությամբ կառուցվել է ոստիկանության երկու սպաների ցուցմունքների հիման վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են վիճարկվող իրադարձություններում, և որոնց հայտարարությունները, պարունակել են անհամապատասխանություններ: Դիմումատուի խնդրանքները՝ ընդունել բավարար վավերագրություն և վկաներ կանչել, որոնք բավականաչափ հիմնավորված էին և առնչվում էին իրեն առաջադրված մեղադրանքներին, չեն քննվել առաջին ատյանի դատարանի կողմից, ինչը ավելի ուշ հաստատել է վերաքննիչ դատարանը: Ճիշտ է, այնուհետև վերաքննիչ դատարանը քննել է այդ պահանջները և քննության համար ընդունել է խնդրո առարկա տեսագրությունը: Այնուամենայնիվ, կասկածելի է, թե արդյոք սա շտկեց առաջին ատյանի վարույթի թերությունները, քանի որ տեսանկարահանումն ընդունելու խնդրանքի վերաբերյալ վերաքննիչ դատարանը որոշում կայացրեց որպեսզի գուտ դատավարական թերություն, որը որևէ կերպ չի ազդում առաջին ատյանի դատարանի եզրակացությունների հիմքերի վրա:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

				Ներպետական դատարանները չկարողացան օգտագործել ողջ խելամիտ հնարավորությունը ստուգելու ոստիկանության սպաների մեղադրական հայտարարությունները, որոնք միակ վկաներն էին, մեղադրանքների հիմքում ընկած փաստերը, որոնք հիմնված էին իրարամերժ ապացույցների վրա: Այդ ցուցմունքների անվերապահ հաստատումը, դիմումատուի ներկայացրած պահանջներին պատշաճ կերպով չանդրադառնալը և վկաների հարցաքննությունը մերժելը հանգեցրել են պաշտպանական իրավունքների սահմանափակումներին:	
93.	Մյանմարի Մալխասյանն ընդդեմ Հայաստանի	15.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22%5D%3A%22001-205068%22%7D	Գործը վերաբերում է դիմումատուի կալանավորմանը և նախնական կալանքին, հիմնավոր կասկածին և շարունակական կալանքի համապատասխանությանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներին: 2008թ մարտի 1-ի դեպքերից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմի անդամ, պատգամավոր, ԵԿՄ փոխնախագահ Մյանմարի Մալխասյանը դատապարտվել էր 5 տարի ազատազրկման հայտնի «Յոթի գործով» և ազատ էր արձակվել համաներմամբ: Դիմումատուն պնդել էր, որ իրեն ազատությունից զրկել են ապօրինաբար, առանց հիմնավոր կասկածների, եւ հայաստանյան դատարանները դա հաշվի չեն առել:	5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի խախտում, որ դիմումատուի ձերբակալումը և նախնական կալանքը հիմնված չեն հիմնավորված կասկածի վրա:
94.	Մեհրաբյանն ընդդեմ Հայաստանի	19.03.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22%5D%3A%22001-201739%22%7D	Գործը վերաբերում է 2008 թ.-ի մարտի 6-ին Երևանի ՋԷԿ-ում տեղի ունեցած վթարի հանգամանքների վերաբերյալ արդյունավետ հետաքննություն չիրականացնելուն, ինչը հանգեցրեց դիմումատուի ամուսնու մահվանը: ՄԻԵԴ-ը գտավ, որ քննչական մարմինները չեն կարողացել ամբողջությամբ պարզել պատահարի հանգամանքները, նույնիսկ հետևելով ներպետական դատարանների որոշումներին, որոնք երեք անգամ վերացրել են հետաքննությունը դադարեցնելու մասին որոշումները:	2-րդ հոդվածի խախտում:
95.	Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի	18.10.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22%5D%3A%22001-186787%22%7D	2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ, որին ամեն օր, փետրվարի 20-ից սկսած, հաջորդել են Երևանի Ազատության հրապարակում ընդդիմության հիմնական թեկնածու պրն Տեր-Պետրոսյանի աջակիցների կողմից անցկացվող բողոքի ցույցերը: Դիմումատուն	5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

				<p>պրն Տեր-Պետրոսյանի՝ Աբովյան քաղաքի շտաբի ղեկավարն էր և պարբերաբար մասնակցում էր ցույցերին: 2008 թվականի մարտի 1-ին Ազատության հրապարակում հավաքը ցրվել է ոստիկանության կողմից, ինչն ամբողջ Երևանում զանգվածային բողոքի ակցիայի պատճառ է դարձել: 2008 թվականի մարտի 8-ին դիմումատուն կանչվել է Աբովյանի ոստիկանական բաժին, որտեղ նրան հարցաքննել են թուղիկների առնչությամբ, որոնք նա պատրաստել և ցույցերի ժամանակ ցուցարարներին էր բաժանել:</p> <p>Մույն գործով ներպետական դատարանները դիմումատուի շարունակական կալանավորումը հիմնավորել են միայն մեջբերելով ներպետական օրենսդրության համապատասխան իրավական սկզբունքները և անդրադառնալով հանցագործության ծանրությանը՝ առանց ներկայացնելու նրա գործի հատուկ փաստերը կամ ներկայացնելու մանրամասներ առ այն, թե ինչպես են հիմնավորվում թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ կրկին հանցագործություն կատարելու ռիսկերը: Ուստի ներպետական դատարանները չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ դիմումատուին կալանավորելու համար:</p>	
96.	Հովհաննիսյան ընդդեմ Հայաստանի	18.05.2021	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-210010%22%5D%7D	Գործը վերաբերում է դիմումատուին աշխատանքից հեռացնելուն, inter alia, 2008-ի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններին հաջորդած ժողովին մասնակցելու հիմքով:	11-րդ հոդվածի խախտում:
97.	Ղավայանն ընդդեմ Հայաստանի	22.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-205224%22%5D%7D	<p>Մույն գործը վերաբերում է ներպետական դատարանների ձախողմանը՝ դիմումատուի նկատմամբ առանց համապատասխան և բավարար պատճառների կալանքի կիրառման վերաբերյալ, դիմումատուի նկատմամբ կալանքը երկարաձգելու մասին դատարանի որոշման դեմ բողոքը քննելու վերաբնիչ քրեական դատարանի մերժմանը, վերաքննիչ քրեական դատարանում դատավարության ընթացքում զենքի հավասարության սկզբունքի խախտմանը:</p> <p>Դիմումատուն ով աշխատում էր հանրային սննդի կետերից մեկում որպես գանձապահ, 2008թ. մարտի 21-ին ձերբակալվել է հարկերից</p>	5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ դիմումատուի շարունակական կալանքի համար համապատասխան և բավարար պատճառներ չներկայացնելու պատճառով:

				<p>խուսափելու մեղադրանքով: Դատարանը ի սկզբանե սահմանել էր 20-օրյա կալանքի ժամկետ, իսկ հետո, չնայած բողոքարկմանը, բազմիցս երկարաձգել էր կալանքի ժամկետը՝ պատճառ բերելով հայցվորի փախուստի կամ հետաքննության վրա ազդելու ռիսկը: 2008թ. նոյեմբերին քաղաքացի Ղավայանը գրավի դիմաց ազատ էր արձակվել:</p>	<p>5-րդ հոդվածի 4-րդ մասի խատում՝ դիմումատուի՝ 2008 թվականի հունիսի 13-ին կալանքի դեմ բողոքը քննելուց հրաժարվելու մասով:</p> <p>5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում առ այն, որ 2008 թ. Ապրիլի 17-ից 18-ի լումներն անցկացվել են խախտելով զենքի հավասարության սկզբունքը:</p>
98.	<p>Հետաքննող լրագրողներն ընդդեմ Հայաստանի</p>	18.05.2021	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-210040%22%7D</p>	<p>Գործը վերաբերում է դիմումատու ընկերության նկատմամբ գրապարտության վարույթին՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում:</p> <p>«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք» թերթի 2008թ. մայիսի 5-ի համարում հոդված էր հրապարակվել՝ «Ում գրպանն են մտնում ավագահանքի փողերը» վերնագրով: Նույն հոդվածը տպագրվել էր նաև «Ազգ» օրաթերթի 2008թ.-ի մայիսի 20-ի ներդիրում: Լրագրողը ներկայացրել էր Իջևանի հարավային մուտքի մոտ, Աղստն գետի վրա գտնվող «Մպիտակ ջուր» ջրամբարից ավազի ապօրինի արդյունահանման վերաբերյալ փաստեր, որտեղ շոշափվում էր այդ ժամանակվա քաղաքապետի՝ Վարուժան Ներսիսյանի անունը: Հետագայում հրապարակվել էր նաև մեկ նյութ՝ «Երեք հանձնաժողովները «կտեսնեն» ջրամբարի ավազի անօրինական</p>	<p>10-րդ հոդվածի խախտում:</p>

				<p>շահագործումը» վերնագրով, ինչից քաղաքապետը ևս վիրավորվել էր: 2008թ.-ի հունիսի 18-ին Իջևանի քաղաքապետարանը «Պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող տեղեկությունը հերքելուն պարտավորեցնելու և վնասի հատուցման պահանջների մասին» հայցադիմում էր ներկայացրել Երևանի Քաղաքացիական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ին հերքելու Իջևանի քաղաքապետարանի դեմ հրապարակված անհիմն տեղեկությունները և քաղաքապետ Վ. Ներսիսյանի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող լուրերը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 10.07.2009թ. վճռով հայցը մերժվել էր: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2009 թվականի որոշմամբ վճիռը բեկանել, և գործն ուղարկվել էր նոր քննության: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 09.07.2010թ. վճռով հայցը բավարարվել էր:</p> <p>Ներպետական դատարանները սահմանափակվել են միայն այն հանգամանքով, որ վիճարկվող հրապարակումը խաթարել է քաղաքապետի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը: Դատարանները հաշվի չեն առել կազմակերպության դիրքը՝ որպես հետաքննական լրագրությամբ զբաղվող ՀԿ, և նրա կողմից բարեխղճության առկայությունը կամ բացակայությունը: Հաշվի չեն առել քաղաքապետի անձը՝ որպես ընտրված պաշտոնյա, հողվածը տպագրելու հարցում կազմակերպության կողմից հետապնդվող նպատակը, վիճարկվող հոդվածում հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ ընդհանուր մտահոգության խնդրի առկայությունը և քաղաքապետի ենթադրաբար կոռուպցիոն գործելակերպի վերաբերյալ տեղեկատվության կարևորությունը</p>	
99.	Հելսինկյան կոմիտեն ընդդեմ	31.03.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%7D	<p>2008 թվականի մայիսի 6-ին դիմումատու կազմակերպությունը դիմել էր Երևանի քաղաքապետին՝ իրազեկելով Լ.Գ-ի մահվան առաջին տարելիցին նվիրված սգո երթ անցկացնելու մտադրության մասին:</p>	11-րդ հոդվածի խաստում:

	Հայաստանի		%22itemid%22:[%22001-153308%22]	2008 թվականի մայիսի 8-ին քաղաքապետը որոշում էր ընդունել ծրագրված միջոցառումն արգելելու մասին: Դիմումատուն բողոքարկել էր մոմավառության խաղաղ երթ իրականացնելու խնդրանքով Երևանի քաղաքապետարանի մերժումը: Քաղաքապետարանը դիմումատուներին մերժելու որոշումը կայացրել էր մոմավառությունից մեկ օր հետո:	13-րդ հոդվածի խախտում:
100.	Մաշինյանն ու Ռամազյանն ընդդեմ Հայաստանի	14.02.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-189795%22]	<i>Հանրային գերակա շահ:</i> 2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուին պատկանող հողամասը թվարկված էր այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ: Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրա ութ հողամասերը: Դիմումատուն չի արձագանքել առաջարկին, քանի որ նրան չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: 2008 թվականի մայիսի 12-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուի դեմ՝ պահանջելով նրան պարտավորեցնել ստորագրել իր գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիրը:	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
101.	Օսմանյանն ու Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի	11.10.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:[%22document%22],%22itemid%22:[%22001-186669%22]	2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

			<p>թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուներին պատկանող հողամասը թվարկված է այն հողատարածքների շարքում, որոնք համարվում են օտարման ենթակա գոտիներ: Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուներին ուղարկել է նամակ, որով առաջարկել է գնել նրանց հողամասը 188000 ՀՀ դրամով՝ գումարած լրացուցիչ 15%, ինչպես պահանջվում է օրենքով՝ վերջնական առաջարկի գումարը դարձնելով 216000 ՀՀ դրամ (մոտավորապես 470 եվրո): Դիմումատուները չեն արձագանքել առաջարկին, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: Նրանք պնդել են, որ իրենք չեին կարող ձեռք բերել իրենց գույքի՝ այլ գործակալության կողմից իրականացված գնահատում, քանի որ գնահատման որևէ այլ գործակալություն չէր ցանկանում իրականացնել իրենց հողի շուկայական արժեքի անկախ գնահատում:</p> <p>2008 թվականի մայիսի 12-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուների և առաջին դիմումատուի հանգուցյալ կնոջ՝ Լ.-ի դեմ հայց է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան (Մարզային դատարան)՝ պահանջելով նրանց պարտավորեցնել, որ ստորագրեն պետության կարիքների համար իրենց գույքը վերցնելու մասին համաձայնագիրը:</p> <p>Գործը վերաբերում է հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարմանը: Դիմումատուի գույքի օտարումը տեղի է ունեցել համաչափության սկզբունքի խախտմանը: «Հիմնական հայեցակետը, մասնավորապես այն, որ օտարման հետևանքով դիմումատուները կորցրել են իրենց եկամտի հիմնական աղբյուրը, հաշվի չի առնվել ներպետական դատարանների կողմից՝ հատկացվող փոխհատուցման գումարի վերաբերյալ իրենց որոշումներում: Դատարանները որոշել են, որ անկախ հանգամանքներից, դիմումատուներին պետք է տրամադրվի փոխհատուցում, որի չափը որոշվել է օտարման ենթակա տարածքում գտնվող անշարժ գույքի գների հիման վրա: Նրանք չեն</p>	
--	--	--	--	--

				<p>դիտարկել այն հարցը, թե արդյոք տրամադրվող փոխհատուցումը կծածկի դիմումատուների՝ ապրուստը հոգալու միջոցներից զրկվելու հետ կապված փաստացի կորուստը, կամ արդյոք այն բավարար էր, որպեսզի նրանք ձեռք բերեն համարժեք հող այն տարածքում, որտեղ նրանք ապրում էին:</p> <p>Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուները ստիպված են եղել առանձին ավելորդ բեռ կրել: Հետևաբար, վիճարկվող օտարումն իրականացվել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտմամբ:</p>	
102.	Փարսադանյան ընդդեմ Հայաստանի	14.02.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-189792%22%5D%7D	<p><i>Հանրային գերակա շահ:</i> Գործի էությունը նույնն է, ինչ վերը նշված 3 գործերում:</p> <p>2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն:</p> <p>Դիմումատուներին պատկանող հողամասերը թվարկված էին այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ:</p> <p>Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուներին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրանց հողամասերը: Դիմումատուները չեն արձագանքել առաջարկին, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը:</p> <p>2008 թվականի մայիսի 12-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուների դեմ՝ պահանջելով նրանց պարտավորեցնել, որ ստորագրեն իրենց գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ:</p>	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
103.	Ռամազյան	14.02.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-189792%22%5D%7D	<p><i>Հանրային գերակա շահ:</i> Գործի էությունը նույնն է ինչ վերը նշված 5</p>	1

	<p>ընդդեմ Հայաստանի</p>		<p>nt/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22%22itemid%22%3A%222001-189789%22%7D</p>	<p>գործերում: 2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուներին պատկանող հողամասերը թվարկված էին այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ: Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուներին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրանց հողամասերը: Դիմումատուները չեն արձագանքել առաջարկին, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: 2008 թվականի մայիսի 12-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուների դեմ՝ պահանջելով նրանց պարտավորեցնել, որ ստորագրեն իրենց գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ:</p>	<p>արձանագրության 1-ին հոդվածի խախտում:</p>
104.	<p>Ալիխանյանն ու Մելիքսեթյանն ընդդեմ Հայաստանի</p>	<p>14.03.2019</p>	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%22%22itemid%22%3A%222001-191547%22%7D</p>	<p><i>Հանրային գերակա շահ:</i> Գործի էությունը նույնն է ինչ վերը նշված 6 գործերում: 2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի և Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն:</p>	<p>1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:</p>

				<p>Դիմումատուներին պատկանող հողամասերը թվարկված էին այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ:</p> <p>Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուներին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրանց հողամասերը: Առաջարկվող փոխհատուցման գումարի չափը կազմել է համապատասխանաբար 183000 ՀՀ դրամ (մոտավորապես 398 եվրո) և 304000 ՀՀ դրամ (մոտավորապես 661 եվրո) երկու հողամասերի համար՝ գումարած լրացուցիչ 15%, ինչպես պահանջվում էր օրենքով:</p> <p>Դիմումատուները չեն արձագանքել առաջարկին, քանի որ նրանց չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: Ըստ երևույթին, նրանք փորձել են այլ ընկերությունների միջոցով ձեռք բերել իրենց գույքի այլընտրանքային գնահատում, սակայն չի հաջողվել: Նրանք պնդում են, որ ոչ մի այլ գնահատող ընկերություն չի ցանկացել իրենց հողի շուկայական արժեքի անկախ գնահատում իրականացնել:</p> <p>2008 թվականի մայիսի 12-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուների դեմ՝ պահանջելով նրանց պարտավորեցնել, որ ստորագրեն իրենց գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիր:</p>	
105.	Լևոն Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի	14.02.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-189790%22%5D%7D	<p><i>Հանրային գերակա շահ:</i> Գործի էությունը նույնն է ինչ վերը նշված 4 գործերում:</p> <p>2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուին պատկանող հողամասը թվարկված էր այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ: Չպարզված օրը</p>	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				<p>«Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրա ութ հողամասերը: Դիմումատուն չի արձագանքել առաջարկին, քանի որ նրան չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: 2008 թվականի մայիսի 13-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուի դեմ՝ պահանջելով նրան պարտավորեցնել ստորագրել իր գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիրը:</p>	
106.	Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի	14.02.2019	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%22%7D%22itemid%22:%5B%22001-189793%22%7D%7D</p>	<p><i>Հանրային գերակա շահ:</i> 2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուին պատկանող հողամասը թվարկված էր այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ: Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրա ութ հողամասերը: Դիմումատուն չի արձագանքել առաջարկին, քանի որ նրան չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: 2008 թվականի մայիսի 13-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուի դեմ՝ պահանջելով նրան պարտավորեցնել ստորագրել իր գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիրը:</p> <p>Խախտումը արձանագրվել է համաչափության սկզբունքի տեսանկյունից: Սույն գործում դիմումատուն նշել է, որ ինքը տնտեսապես կախված է եղել տվյալ հողից, որն իր եկամտի միակ աղբյուրն էր: Դատարանները որոշել են, որ դիմումատուին, անկախ հանգամանքներից, պետք է տրամադրվի փոխհատուցում, որի չափը որոշվել էր օտարման ենթակա տարածքում գտնվող անշարժ գույքի</p>	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				գների և ակնկալվող եկամուտների հիման վրա: Նրանք չեն դիտարկել այն հարցը, թե արդյոք տրամադրվող փոխհատուցումը կծածկի դիմումատուի՝ ապրուստը հոգալու միջոցներից գրկվելու հետ կապված փաստացի կորուստը, կամ արդյոք այն բավարար կլինի, որ նա ձեռք բերի համարժեք հող այն տարածքում, որտեղ նա ապրում էր:	
107.	Վարդանյանն ու Հախվերդյանն ընդդեմ Հայաստանի	14.02.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-189794%22%7D%7D	<p><i>Հանրային գերակա շահ:</i> Գործի էությունը նույնն է, ինչ վերը նշված 2 գործերում:</p> <p>2007 թվականի նոյեմբերի 1-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի եւ Թեղուտի գյուղական համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 1279-Ն որոշումը: Որոշման համաձայն՝ դրա հավելվածներում թվարկված հողատարածքների ձեռք բերող է համարվում «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն կամ Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման նախագծի իրականացման նպատակով դրա կողմից հիմնադրված «Թեղուտ» ՓԲԸ-ն: Դիմումատուին պատկանող հողամասը թվարկված էր այն հողատարածքների շարքում, որոնք համարվում էին օտարման ենթակա գոտիներ: Չպարզված օրը «Թեղուտ» ՓԲԸ-ն դիմումատուին ուղարկել է նամակ, որով առաջարկվել է գնել նրա ութ հողամասերը: Դիմումատուն չի արձագանքել առաջարկին, քանի որ նրան չի գոհացրել առաջարկվող փոխհատուցման գումարի չափը: 2008 թվականի մայիսի 14-ին «Թեղուտ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դիմումատուի դեմ՝ պահանջելով նրան պարտավորեցնել ստորագրել իր գույքը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիրը:</p>	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
108.	Արտաշես Անտոնյան ընդդեմ Հայաստանի	22.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-205225%22%7D%7D	<p>Մույն գործը վերաբերում է մաքսային կանոնների խախտման համար դիմումատուի նկատմամբ վարչական տուգանքի կիրառման օրինականությանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կարգավորման շրջանակում:</p> <p>Դիմումատուն 2008թ. հուլիսի 30-ին տուգանվել էր իր աշխատավայրում իրականացված ստուգումներից հետո:</p>	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				<p>Մտուգումների արդյունքում պարզվել էր, որ մաքսային մարմինները տրամադրել են փաստաթուղթ, որը հաստատում է, որ քաղաքացին որոշ ներկրված ապրանքների համար գների սխալ հայտարարագիր է ներկայացրել, ինչի արդյունքում նրան տուգանել էին վարչական վարույթի սահմաններում, որը հարուցվել էր 2008թ. հոկտեմբերի 17-ին: Արտաշես Անտոնյանը բողոքարկել էր որոշումը վարչական դատարաններում՝ պնդելով, որ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 37-րդ հոդվածը նախատեսում է տուգանքը սահմանել հանցագործությունը բացահայտելուց հետո 2 ամսվա ընթացքում: Քանի որ ստուգումներն իրականացվել էին 2008թ. հուլիսին, ապա տուգանելու վերջնաժամկետը նույն տարվա սեպտեմբերն էր: Վարչական դատարանը մերժել էր հայցը՝ նշելով, որ հանցագործությունը բացահայտվել է 2008թ. հոկտեմբերի 17-ին: Վարույթի ընթացքում քաղաքացի Անտոնյանից նրա գործատուն պահել էր 2011թ. հունիսից 2012թ. ապրիլի աշխատավարձի 50 տոկոսը, իսկ նրան պատկանող բնակարանները առգրավվել էին և վաճառվել:</p>	
109.	Պապոյանն ընդդեմ Հայաստանի	11.01.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-179854%22%5D%7D	<p>Վարչական դատարանի 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը մի քանի տարի մնացել է չկատարված: 2008 թվականի հուլիսի 30-ի վճիռը, որը կայացվել էր ի օգուտ դիմումատուի, մնացել է չկատարված ավելի, քան ութ տարի և տասնմեկ ամիս: Կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստարկ այդ ուշացումը հիմնավորելու համար: Հետևաբար, ՄԻԵԴ-ը գտնել է, որ Հայաստանի իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ՝ վերջնական վճիռը կատարելու համար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները զրկել են սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժից:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
110.	Նորիկ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի	22.10.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-205145%22%5D%7D	<p>Գործը վերաբերում է Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված բարոյական վնասի փոխհատուցման իրավունքի առկայությանը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն: 2008թ. հոկտեմբերին Դիմումատուի դեմ գործ էր հարուցվել թմրանյութերի վաճառքի մեղադրանքով: 2009թ. հոկտեմբերին նա մեղավոր էր ճանաչվել և 3 տարվա ազատազրկման դատապարտվել:</p>	5-րդ հոդվածի 5-րդ մասի խախտում:

				Վճռաբեկ դատարանը նրան արդարացրել էր՝ որոշելով, որ հայցվորի դեմ ապացույցները ձեռք են բերվել նրա իրավունքների խախտումներով: 2011թ հուլիսին նա քաղաքացիական հայց էր ներկայացրել բարոյական և նյութական վնասի փոխհատուցման համար: Դատարանը բավարարել էր նյութական վնասի փոխհատուցման հայցը միայն:	
111.	Խաչատուրյանն ընդդեմ Հայաստանի	19.03.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%22itemid%22:%7B%22001-201737%22%7D%7D	Գործը վերաբերում է դիմումատուի բնակարանի օտարմանը. վերջինս չի համապատասխանել «օրենքով նախատեսված պայմաններին»: 2009 թ. Ապրիլի 22-ին շրջանային դատարանը որոշում կայացրեց, և վերին դատարանները հաստատեցին, որ բնակարանի վրա չի տարածվում Կառավարության որոշումը, քանի որ տունը ընդգրկված չէր գույքի միավորների սպառիչ ցուցակում:	1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
112.	Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի	10.11.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%22itemid%22:%7B%22001-168390%22%7D%7D	2009 թվականի ապրիլի 30-ին դիմումատուի դեմ հարուցվել է քրեական գործով վարույթ: Սույն գործում բոլոր հնարավոր միջոցները չեն ձեռնարկվել վկաների ներկայանալն ապահովելու համար: Ճիշտ է, որ առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վկաներ Մ. Ս.-ին և Դ. Թ.-ին ոստիկանության աջակցությամբ բերման ենթարկելու մասին: Այս միջոցը, այնուամենայնիվ, որևէ արդյունք չի տվել: Այդպիսի պայմաններում առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնությանը՝ ապահովելու համար վկաներ Մ. Ս.-ի և Դ. Օ.-ի ներկայանալը, որոնք ենթադրաբար բացակայում էին երկրից: Հաշվի առնելով չներկայացած վկաների չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների բացակայությունը և դիմումատուի վերաբերյալ գործի դատական քննության ժամանակ վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի բացակայությանը հակակշռող ընթացակարգային երաշխիքների անբավարարությունը՝ Դատարանը կարծում է, որ քրեական գործով վարույթն ընդհանուր առմամբ անարդարացի է եղել այն պատճառով, որ այդ չներկայացած վկաների նախաքննական ցուցմունքները ճանաչվել են որպես ապացույց:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ՝ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից զրկվելու առումով:

113.	Կարեն Պողոսյանն ընդդեմ Հայաստանի	31.03.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-161735%22%7D միայն փոխհատուցում՝ https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-181839%22%7D	Ձեռքբերման վաղեմության ուժով առաջին ատյանի դատարանը ճանաչել է դիմումատուի սեփականության իրավունքը 500քմ մակերեսով շինության նկատմամբ: Երևանի քաղաքապետարանի և գլխավոր դատախազի՝ սահմանված ժամկետների բաց թողնմամբ բերված վերաքննիչ բողոքները վարույթ ընդունելով, դատարանը հաշվի չի առել, որ գործին չմասնակցած անձը, ում իրավունքների վերաբերյալ կայացվել է դատական ակտ, իրավունք ունի սահմանված ժամկետներից ուշ բերված վերաքննիչ բողոք բերել դատարան այդ ակտի դեմ բողոք ներկայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում: Սակայն դատարանը որոշել է, որ Երևանի քաղաքապետարանի և գլխավոր դատախազի փաստարկները, թե նրանք միայն 2009 թվականի փետրվարին են տեղեկացել 2001 թվականի հունիսի 8-ի վճռի մասին, և 2009 թվականի հունիսի 12-ին որոշել քննության առնել 2009 թվականի մայիսին նրանց կողմից բերված վերաքննիչ բողոքները: ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ սա հանգեցրել է գործի նոր քննության և հոգուտ դիմումատուի կայացված օրինական ուժի մեջ մտած վճռի բեկանման:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
114.	Մանուչարյան և ընդդեմ Հայաստանի	24.11.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-168860%22%7D	2009 թվականի հուլիսի 1-ին հարուցվել է քրեական գործ Կ. Ս.-ի սպանության փաստի առթիվ, ում վրա այդ օրը կրակ են արձակել և սպանել ժամը 01:30-ին Ալավերդի քաղաքում: Այդ օրն ավելի ուշ դիմումատուն մեղայականով ներկայացել է ոստիկանություն, հանձնել իր զենքը և խոստովանել սպանությունը կատարած լինելու հանգամանքը, նույն օրը առաջադրվել է մեղադրանք: Չեն գործադրվել բոլոր ողջամիտ ջանքերը՝ դիմումատուի գործով դատաքննությանը վկա Ք. Ս.-ի ներկայությունն ապահովելու համար: Մարգային դատարանը փորձել է ապահովել Ք. Ս.-ի ներկայությունը դատավարությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ՝ մի քանի անգամ հետաձգելով լսումները և դիմելով ոստիկանության օգնությանը՝ դատաքննությանը նրա հարկադրաբար ներկայանալն ապահովելու համար: Այնուամենայնիվ, այդ միջոցները եղել են ապարդյուն՝ հաշվի առնելով դատարանի կարգադրությունը ոստիկանության կողմից կատարելու անընդմեջ ձախողումը: Այն իրավիճակում, երբ ոստիկանությունը զուտ մի քանի անգամ այցելել է Ք. Ս.-ի տուն և տեղեկանալով, որ նա արտասահմանում է գտնվում, ո՛չ	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ միասին վերցրած:

				<p>ստուգել է այդ տեղեկատվության հավաստիությունը և ո՛չ էլ փորձել է պարզել վերջինիս գտնվելու վայրը, ինչը հնարավորություն կտար դատարանին դիմելու միջազգային իրավական օգնության, Դատարանը չի կարող համարել, որ իշխանություններն «ակտիվորեն փնտրել են վկային» և ձեռնարկել «բոլոր ողջամիտ միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար»:</p> <p>Դատավարական որևէ միջոց չի ձեռնարկվել՝ գործով դատաքննության ժամանակ Ք. Մ.-ին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար: Դիմումատուն հնարավորություն չի ունեցել հարցաքննելու Ք. Մ.-ին վարույթի որևէ փուլում: Ավելին, դիմումատուն Վերաքննիչ դատարանից պահանջել է Ք. Մ.-ի ցուցմունքը հայտարարել անընդունելի, սակայն իր պահանջը որևէ կերպ չի բավարարվել:</p>	
115.	Նիկոդոսյանն ընդդեմ Հայաստանի	18.05.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-173500%22%5D%7D	<p>2009 թվականի օգոստոսի 11-ի վճիռը, որը կայացվել էր ի օգուտ դիմումատուի, մնացել է չկատարված 2010 թվականի մարտից մինչև 2015 թվականի հունիսը, ուստի Դատարանը գտնում է, որ Հայաստանի իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ՝ վերջնական վճիռը կատարելու համար, գրկել են 6-րդ հոդվածի 1-ին կետի և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժից:</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
116.	Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի	18.01.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-179861%22%5D%7D	<p>Վարչական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը մի քանի տարի մնացել է մասնակիորեն չկատարված: Դիմումատուն վճարվել է մինչև 2009 թվականի նոյեմբերի 29-ն իր հարկադիր պարապուրդի համար, սակայն նա մինչ օրս չի վերականգնվել իր նախկին պաշտոնում կամ իր նախկին պաշտոնին նման որևէ այլ պաշտոնում: Ոչ էլ նրան հատուցում է տրամադրվել մինչև աշխատանքում իրեն վերականգնելու օրն իր հարկադիր պարապուրդի համար: 2009 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, որը կայացվել է ի օգուտ դիմումատուի, մնացել է մասնակիորեն չկատարված գրեթե յոթ տարի և ութ ամիս: Կառավարությունը չի ներկայացրել որևէ փաստարկ՝ այդ ուշացումը հիմնավորելու համար: Հետևաբար Դատարանը գտնում է, որ Հայաստանի իշխանությունները, մի քանի տարի չձեռնարկելով անհրաժեշտ</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

				միջոցներ՝ վերջնական վճիռը կատարելու համար, 6-րդ հոդվածի 1-ին կետի և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները գրկել են սույն գործով իրենց արդյունավետ ողջ ուժից:	
117.	Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի	06.12.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-187941%22%5D%7D	2009 թվականի նոյեմբերի 5-ին Գավառի քննչական վարչությունը սպանության փորձ կատարելու և ապօրինի կերպով զենք պահելու (կրելու) առիթով հարուցել է քրեական գործով վարույթ: Մարգային դատարանը դիմումատուներին մեղավոր է ճանաչել մի խումբ անձանց հետ երկու կամ ավելի անձանց սպանության փորձ կատարելու և ապօրինի կերպով զենք կրելու մեջ և դատապարտել է նրանց համապատասխանաբար տասներեք և տասներկու տարի ժամկետով ազատազրկման: Մինչդատական վարույթի ընթացքում իրականացված միակ առերեսումը եղել է Հ.Հ.-ի՝ որպես վկայի, և դիմումատուների միջև: Դիմումատուները խնդրել են, որ Հ.Հ.-ն և վկաներ Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն, Ս.Գ.-ն և Մ.Կ.-ն հարցաքննության համար կանչվեն և բերման ենթարկվեն առաջին ատյանի դատարան, սակայն նրանցից ոչ մեկը չի ներկայացել: Առաջին ատյանի դատարանը չի ձեռնարկել լրացուցիչ այլ միջոցներ Հ.Հ.-ին և Մ.Կ.-ին Հայաստանի տարածքում գտնելու համար, ինչպես նաև չի դիմել, օրինակ՝ միջազգային իրավական օգնության՝ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի և Ս.Գ.-ի գտնվելու վայրը պարզելու համար, ովքեր, ըստ երևույթին, գտնվում էին երկրից դուրս: Մարգային դատարանն անձամբ չի լսել վկաներ Հ.Հ.-ին, Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին և Մ.Կ.-ին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուների դեմ, կարողացել է էապես ազդել դիմումատուների պաշտպանվելու իրավունքի վրա: Մարգային դատարանի դատավճռում ոչինչ չի մատնանշում, որ այն առանձնահատուկ զգուշավորություն է դրսևորել չստուգված ապացույցների նկատմամբ, կամ որ ավելի քիչ նշանակություն է տվել նման ցուցմունքներին	6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:
118.	Համբարձումյանն ընդդեմ Հայաստանի	05.12.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-187941%22%5D%7D	Գործը վերաբերում է դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքի խախտմանը՝ ոստիկանության կողմից 2010 թվականին գաղտնի հսկողության տակ գտնվելու պատճառով: ՄԻԵԴ-ը գտավ, որ միջնորդագիրը բավականաչափ հստակ չէր և անորոշ էր, ինչը անընդունելի էր, երբ խոսքը գնում էր անձնական և	8-րդ հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

			1-198708%22}]	ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի այնպիսի լուրջ միջամտության մասին, ինչպիսին է գաղտնի հսկողությունը: Ավելին, կարգադրության մեջ նշված չէին այն հատուկ միջոցառումները, որոնք պետք է իրականացվեին դիմումատուի նկատմամբ և չունեին բավարար դատական վերահսկողություն:	
119.	Դադայանն ընդդեմ Հայաստանի	06.09.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-186037%22%5D%7D	<p>2010 թվականի մարտի 11-ին երկու անձ՝ Ս.Թ.-ն և Հ.Օ.-ն, Թբիլիսիում ձերբակալվել են Վրաստանի իրավապահ մարմինների կողմից, երբ փորձել են իրացնել 15 գ հարստացված ուրան, որը նրանք նույն օրը գնացքով փոխադրել էին Հայաստանից: 2010 թվականի ապրիլին Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը տեղեկատվություն է ստացել Վրաստանի իշխանություններից առ այն, որ Ս.Թ.-ն և Հ.Օ.-ն ռադիոակտիվ նյութը ստացել էին դիմումատուից: 2010 թվականի ապրիլի 22-ին Ազգային անվտանգության ծառայությունը դրա կապակցությամբ քրեական վարույթ է հարուցել: Նույն օրը դիմումատուն ձերբակալվել է Ս.Թ.-ին և Հ.Օ.-ին հանցանք կատարելու մեջ օժանդակելու և դրդելու կասկածանքով: Ենթադրվում էր, որ նա էր ձեռք բերել հարստացված ուրանը, որն այնուհետև Երևանում վաճառել էր Հ.Օ.-ին: Ս.Թ.-ն և Հ.Օ.-ն այնուհետև ռադիոակտիվ նյութը մաքսանենգ ճանապարհով տեղափոխել էին Թբիլիսի, որտեղ էլ ձերբակալվել էին: 2010 թվականի ապրիլի 23-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել Ս.Թ.-ին և Հ.Օ.-ին հանցանք կատարելու մեջ օժանդակելու և դրա կատարմանը դրդելու համար</p> <p>դիմումատուն քննության փուլում չի ունեցել վկաների ցուցմունքները վիճարկելու հնարավորություն: Այս վկաների նկատմամբ քրեական հետապնդում էր իրականացվել, և նրանց դատապարտել էին Վրաստանում, մինչդեռ դիմումատուն, ով մեղադրվում էր նրանց օժանդակելու մեջ, ձերբակալվել էր, և նրա հանդեպ քրեական հետապնդում էր իրականացվել Հայաստանում: Ամեն դեպքում, բոլոր ապացույցները պետք է ստուգվեին դատարաններում: Ավելին, Մարգային դատարանի վճռում ոչինչ չի մատնանշում, որ այն առանձնահատուկ զգուշավորություն է դրսևորել չստուգված ապացույցների նկատմամբ, կամ որ այն ավելի քիչ նշանակություն է</p>	6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

				տվել նման ցուցմունքներին:	
120.	«Օլիմպարտադրակա ն կոռպերատիվ ն» ընդդեմ Հայաստանի	30.07.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-203974%22%5D%7D	Գործը վերաբերում է ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի խախտմանը: Դիմումատուի գործի քննությունը 3 ատյաններում տևել է 10 տարի, 2 ամիս, 17 օր: Գործի քննության սկիզբ՝ 23/03/2010	6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:
121.	Արա Հարությունյան ընդդեմ Հայաստանի	20.10.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-167561%22%5D%7D	2010 թվականի օգոստոսի 2-ին Դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ: 2010 թվականի օգոստոսի 10-ին դիմումատուն բերվել է Լոռու մարզային դատարան, որը քննել և բավարարել է քննիչի նրան կալանավորելու մասին միջնորդությունը: Այսպես վարվելով՝ Մարզային դատարանը, ողջամիտ կասկածի առկայությունից բացի՝ որպես նրա կալանավորումը հիմնավորող հիմք է համարել դիմումատուի թաքնվելու ու տուժողի և (կամ) վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով քննությունը խոչընդոտելու ռիսկը: Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական և կարծրատիպային ձևով այս հիմքերը նշելով՝ չներկայացնելով որևէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմումատուի գործով եւ հիմնականում իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով ՔԴՕ-ի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ: Նաև չի ուսումնասիրել դիմումատուի կողմից արված որևէ առարկություն կամ դիտարկել նրան գրավով ազատ արձակելու հնարավորությունը: ի վերջո՝ չորս ամսից ավելի կալանքի տակ գտնվելուց հետո, դիմումատուն գրավով ազատ է արձակվել, սակայն չի ներկայացվել որևէ հիմնավորում այն մասին, թե ինչու հնարավոր չի եղել այդ միջոցն ավելի վաղ կիրառել:	5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում այն հիմքով, որ կալանավորման համար հիմնավոր և բավարար հիմքեր չեն ներկայացվել:
122.	«Դարեսկիզբ» ՓԲԸ ընդդեմ Հայաստանի	18.05.2021	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%2C%22itemid%22:%5B%22001-210039%22%5D%7D	Գործը վերաբերում է դիմումատու ընկերության նկատմամբ գրպարտության վարույթին՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում: 2011 թվականի փետրվարի 8-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է ՀՀ	10-րդ հոդվածի խախտում:

				<p>ԱԺ նախկին պատգամավորներ Սամվել Ալեքսանյանի, Ռուբեն Հայրապետյանի և Լևոն Սարգսյանի հայցն ընդդեմ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ի (հողվածը տպագրվել է 2010 թ. հոկտեմբերի 14-ին): Որպես պատվին ու արժանապատվությանը հասցված վնասի փոխհատուցում Դատարանը դիմումատուին պարտավորեցրել էր պատգամավորներից յուրաքանչյուրին վճարել 2 միլիոն 44 հազար դրամ:</p>	
123.	Ադյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի	12.10.2017	<p>https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-177429%22%5D%7D</p>	<p>2011 թվականի մայիսին ու հունիսին դիմումատուները գորակոչվել են զինվորական ծառայության: Նրանք չեն ներկայացել, փոխարենը իրենց բնակության վայրի զինվորական կոմիսարիատ եւ մարզային դատախազություն են ուղարկել գրություններ՝ հրաժարվելով անցնել զինվորական կամ այլընտրանքային ծառայություն: 2011 թվականի հունիսի 15-ին երկրորդ դիմումատուին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը): Իշխանությունների կողմից Եհովայի վկաների խղճին և նրանց համոզմունքներին համապատասխան ծառայության բացակայություն: այլընտրանքային ծառայության համակարգի երաշխավորում:</p> <p>Սույն գործում դիմումատուները Եհովայի վկաներ են՝ կրոնական խմբավորում, որոնք այն համոզմունքն ունեն, որ անընդունելի է զինվորականների շրջանում նույնիսկ չզինված ծառայությունը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ իշխանությունները տվյալ ժամանակահատվածում պատշաճ ուշադրություն չեն դարձրել դիմումատուների խղճի ու համոզմունքների պահանջներին և չեն երաշխավորել այլընտրանքային ծառայության այնպիսի համակարգ, որով արդարացի հավասարակշռություն է հաստատվում ընդհանուր առմամբ հասարակության և դիմումատուների շահերի միջև, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով: Վերոնշյալից հետևում է, որ դիմումատուների նկատմամբ մեղադրական դատավճիռների կայացմամբ տեղի է ունեցել միջամտություն, ինչը սույն դրույթի իմաստով անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական</p>	9-րդ հոդվածի խախտում:

				հասարակությունում:	
124.	Բաղայանն ընդդեմ Հայաստանի	20.07.2017	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-175496%22	2011 թվականի հուլիսի 25-ին Մարգային դատարանը բավարարել է դիմումատուին կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը և որոշում է կայացրել նրան երկու ամիս ժամկետով, մասնավորապես՝ մինչև 2011 թվականի սեպտեմբերի 23-ը կալանավորելու մասին: Այսպես վարվելով՝ Մարգային դատարանը, հիմնավոր կասկածի առկայությունից բացի, դիմումատուի կալանավորման համար հիմք է համարել նրա կողմից թաքնվելու և քննությունը խոչընդոտելու վտանգը: Մարգային դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական և կարծրատիպային ձևով այս հիմքերը նշելով՝ չներկայացնելով որևէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմումատուի գործով, և հիմնականում իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ (տե՛ս վերևում՝ 8-րդ պարբերությունը): Որևէ բացատրություն չի տրվել առ այն, թե ինչու է դատարանը քննիչի միջնորդությունը համարել հիմնավորված, կամ թե ինչու է դա անհրաժեշտ եղել:	5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:
125.	Ղուլյանն ընդդեմ Հայաստանի	24.01.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-189420%22	2011 թվականի դեկտեմբերի 30-ին դիմումատուն Բրիտանական խորհրդի դեմ հայց է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ վիճարկելով 2011 թվականի դեկտեմբերի 1-ի հրամանը և պահանջելով վերականգնում [նախկին աշխատանքում]: Դատավոր Ա.Մ.-ի մասնակցությունը Դիմումատուի գործին առաջին ատյանի դատարանի վարույթը դարձրել է կողմնակալ, և այդ թերությունը բողոքարկմամբ չի վերացվել:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
126.	Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի	19.07.2018	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-184659%22	Գործը վերաբերում է 2012 թ.-ին իշխանությունների ձախողմանը պատշաճ հետաքննություն իրականացնել դիմումատուի (շրջակա միջավայրի պաշտպանության նախարարության աշխատող քաղաքացիական ծառայող) մեղադրանքների վերաբերյալ՝ իր վերադասի կողմից աշխատավայրում վատ վերաբերմունքի վերաբերյալ: Եվրոպական դատարանը գտավ, որ հարցման	3-րդ հոդվածի խախտում՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդման

				<p>ընթացքում իշխանությունները լուրջ փորձեր չեն ձեռնարկել պարզելու դիմումատուի մեղադրանքների հանգամանքները (3-րդ հոդվածի դատավարական խախտում): 2012 թվականի հունվարի 10-ին, Հ.Ա.-ն՝ իր բաժնի պետը և Ա.Կ.-ն՝ նրա տեղակալը, Հ.Ա.-ի աշխատասենյակում Դիմումատուի նկատմամբ բռնություն են գործադրել: Մասնավորապես, հարձակվել են իր վրա, բռնել ձեռքերը, վիրավորել և ստիպողաբար վերցրել իրեն առնչվող մի փաստաթուղթ, որն ինքը տարել էր նրանց մոտ՝ իր առարկությունները գրելու համար: Բռնության հետևանքով ուշագնաց է եղել, հասցվել են մարմնական վնասվածքներ, թևերին ստացել է բազմաթիվ կապտուկներ և լրջորեն նվաստացվել է:</p>	<p>առնչությամբ պատշաճ և արդյունավետ քննություն չիրականացնելու առումով:</p>
127.	Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի	03.10.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%5B%22document%22%5D%22itemid%22:%5B%22001-196149%22%5D%7D	<p>Դատարանը դիմումատուին ճանաչել էր անգործունակ վերջինիս կնոջ և որդու՝ 2012թ. հուլիսի 4-ի դիմումի հիման վրա: Միաժամանակ դիմումատուի խնամակալ էր նշանակվել նրա որդին: Դիմումատուն չէր կարողացել բողոքարկել իր դեմ կայացված որոշման դեմ քանի որ առկա էր օրենսդրական արգելք առ այն, որ անգործունակ անձինք չունեն ինքնուրույն դատարան դիմելու իրավունք: Նույն արգելքի պատճառով դիմումատուն չէր կարողացել ներկայացնել ամուսնալուծության պահանջ:</p>	<p>6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքի առնչությամբ, ինչպես ամուսնալուծության և վտարման գործով վարույթն ավարտելու, այնպես էլ գործունակության վերականգնումը պահանջելու անհնարիության մասով:</p> <p>8-րդ հոդվածի խախտում գործունակությունից զրկելու</p>

					առնչությամբ:
128.	Աղանյանն ու մյուսները ընդդեմ Հայաստանի	05.12.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-198793%22	Գործը վերաբերում է մտքի, խղճի և դավանանքի ազատությանը: Դիմումատուները Եվհովայի վկաներ են և 2012 թվականի տարբեր ամսաթվերի դատապարտվել են այն բանից հետո, երբ հրաժարվել են զինվորական և այլընտրանքային ծառայությունից, քանի որ վերջինս իր բնույթով քաղաքացիական չի եղել: Համանման գործ է Ադյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործը:	9-րդ հոդվածի խախտում:
129.	Չիրագովն ու այլոք ընդդեմ Հայաստանի	16.06.2015	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-155353%22 միայն փոխհատուցում՝ https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-179554%22	Գործը վերաբերում է աղբյուրների 6 փախստականների, ովքեր, չեն կարողացել վերադառնալ Լաչինում գտնվող իրենց սեփականությունները, որտեղից ստիպված են եղել փախչել 1992թ.-ին Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ:	1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում: 13-րդ հոդվածի խախտում: 8-րդ հոդվածի խախտում:
130.	Եզնուկյանն ընդդեմ Հայաստանի	10.12.2020	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-206521%22	Գործը վերաբերում է ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքի խախտմանը՝ քրեական դատավարության չափազանց երկար տևողության կապակցությամբ: Մասնավորապես Դիմումատուի գործի քննությունը մեկ ատյանում տևել է 4 տարի 2 ամսիս, 23 օր: Դատավարությունը սկսվել է 22/07/2016թ.:	6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
131.	Կարապետյանը և այլոք ընդդեմ Հայաստանի	17.11.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-168703%22	Գործը վերաբերում է 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո ծավալված բողոքի ակցիաների ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարության թվով չորս բարձրաստիճան պաշտոնյաների քննադատական հայտարարություններին (2008թվականի փետրվարի 23 և 24) և այդ հիմքով վերջիններիս աշխատանքից ազատելու իրավաչափությանը (2008 թվականի փետրվարի 25): Եվրոպական դատարան ներկայացված գանգատով դիմումատուները պնդել էին, որ աշխատանքից ազատումը խախտել է	Խախտում չի արձանագրվել:

				Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու իրենց իրավունքը:	
132.	Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի	05.02.2013	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-116182%22	Դիմումատուն բողոքներ էր ներկայացրել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի ներքո: Եվրոպական դատարանը վճռով հաստատել է, որ Եվրոպական կոնվենցիա 7-րդ հոդվածի ներքո (օրենքով չնախատեսված պատժի արգելք) դիմումատուի իրավունքների խախտում Հայաստանի Հանրապետությունը թույլ չի տվել, իսկ Եվրոպական կոնվենցիայի այլ հոդվածների ներքո ներկայացված բողոքները ճանաչվել են անընդունելի:	Խախտում չի արձանագրվել:
133.	Բոյաջյանն ընդդեմ Հայաստանի	22.03.2011	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-104064%22	Սկսած 1971 թվականից դիմումատուն ավանդներ է ներդրել ԽՍՀՄ Խնայբանկի հայաստանյան մասնաճյուղում: 1993թ. վերջինս վերակազմավորվել է ՀՀ պետական մասնագիտացված խնայողական ֆանկի: 2004 թ. հունիսի 21-ին Դիմումատուն դիմել է Խնայբանկ՝ ավանդները հետ ստանալու նպատակով, սակայն ստացել է մերժում: 2004 թ. օգոստոսի 4-ին Դիմումատուն Կառավարության դեմ հայց է ներկայացրել՝ պահանջելով վերադարձնել Հայխնայբանկում ներդրված իր ավանդները և արժեթղթերը: Նա մասնավորապես պահանջել է վերադարձնել ներդրման պահին եղած արժույթով: 2004 օգոստոսի 6-ին Դատարանը մերժել է հայցի ընդունումը՝ պատճառաբանելով, որ ՀՀ ԱԺ և Կառավարությունը դեռ չեն ընդունել օրենքներ և որոշումներ և վեճը դատարանի քննությանը ենթակա չէ:	Խախտում չի արձանագրվել:
134.	Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի	04.02.2016	https://hudoc.echr.coe.int/eng#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-160315%22	Դիմումատուն 1995 թվականից հանդիսանում էր ընդդիմադիր քաղաքական կուսակցության անդամ: 1997 թվականից դիմումատուն ղեկավարում էր կուսակցության տարածքային գրասենյակներից մեկը Բաղրամյան փողոցի տարածքում: 2004 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները կազմակերպել էին հանրահավաքներ՝ արտահայտելով իրենց քննադատությունը խախտումների վերաբերյալ, որոնք տեղ էին գտել 2003 թվականի փետրվար-մարտ ամիսներին ՀՀ-ում անցկացված նախագահական ընտրությունների ընթացքում, ինչպես նաև վիճարկում էին վերընտրված նախագահի լեգիտիմությունը:	Խախտում չի արձանագրվել:

				<p>Դիմումատունն նշել էր նաև, որ իշխանությունները փորձում էին ձերբակալել, հետապնդել և խուզարկել ընդդիմության աջակիցներին: 2004 թվականի ապրիլի 10-ին ժամը 17:10 դիմումատունն ձերբակալվել էր և տեղափոխվել ոստիկանական բաժանմունք, որտեղ նրա վերաբերյալ նախաձեռնվել էր վարչական գործ ոստիկանների իրավաչափ որոշումը չկատարելու համար: Նույն օրը Արմավիրի վարչական շրջանի դատարանը նրա նկատմամբ նշանակել էր 10 օր վարչական կալանք: 10-օրա վարչական պատիժը հաշվարկվել էր 2004 թվականի ապրիլի 10-ի 17:10 ընդմիջ:</p> <p>2004 թվականի ապրիլի 20-ին չպարզած ժամի Արմավիրի վարչական շրջանի դատարանը քննել և թույլտվություն էր տվել քննչական գործողության, որով պետք է խուզարկվեր դիմումատուի բնակարանը: Խուզարկության արդյունքում հայտնաբերվել էր պլաստիկ տուպրակով կանեփ թմրամիջոց: Արդյունքում հարուցվել էր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով՝ թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունն առանց դրանք իրացնելու նպատակի:</p>	
135.	Մակեյանն ու այլք ընդդեմ Հայաստանի	05.12.2019	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-198706%22%7D%7D	<p>2008-ի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների ժամանակ Դիմումատունն համակարգում էր նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի Շիրակի մարզի նախընտրական շտաբի աշխատանքները: 2008 թվականի փետրվարի 21-ին հարուցվել է քրեական գործ: Մակեյանը 2008-ի փետրվարի 25-ից գտնվում է ազատազրկման մեջ: Նա մեղադրվում էր ընտրական հանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու համար: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, այնուհետև՝ ՀՀ քրեական գործերով վերաքննիչ դատարանի կողմից Պետրոս Մակեյանը դատապարտվել էր ազատազրկման՝ 3 տարի ժամանակով: ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ տեղական դատարանի եզրակացությունները կամայական և ակնհայտորեն անհիմն չեն եղել: Դիմումատունների դատաքննությունը, ընդհանուր առմամբ, արդարացի էր, և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով խախտում տեղի չի ունեցել:</p>	Խախտում չի արձանագրվել:

136.	Բայաթյանն ընդդեմ Հայաստանի	07.07.2011	https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22tabview%22%3A%22document%22%2C%22itemid%22%3A%22001-105611%22%7D	<p>Դիմումատուն հանդիսանում է «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամ: 1997 թ. նա հաճախել է այդ կազմակերպության տարբեր կրոնական ծառայություններ: 2000 թ. հունվարի 16-ին Էրեբունի համայնքի զինվորական կոմիսարիատում դիմումատուն հաշվառվեց որպես զինապարտ: 2001 թ. հունվարի 16-ին դիմումատուն՝ 17 տարեկանում, ենթարկվեց բժշկական զննության, որի արդյունքում ճանաչվեց զինվորական ծառայության համար պիտանի: Զինվորական ծառայության անցնելու համար դիմումատուն պետք է զորակոչվեր 2001 թ. գարնանը (ապրիլ-հունիս): Դիմումատուն դիմումներ է ուղղել ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինկոմիսարին և ՀՀ ազգային ժողովին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողով՝ պատրաստակամություն հայտնելով կատարել քաղաքացիական այլընտրանքային ծառայություն, զին. ծառայության փոխարեն, որը մերժվեց: Մայիսի սկզբին ծանուցագիր ուղարկվեց Դիմումատուին, իսկ 2001 թ. մայիսի 14-ին Էրեբունի համայնքի զինվորական կոմիսարիատի աշխատակիցը զանգահարեց դիմումատուի տուն և հարցրեց դիմումատուի մորը հաջորդ օրը զինվորական կոմիսարիատ ներկայանալու դիմումատուի իրազեկության մասին: Նույն օրը Էրեբունյան դիմումատուն ժամանակավոր հեռացավ տանից՝ զինվորական ծառայության իրեն բռնի ուժով տանելու</p>	Խախտում չի արձանագրվել:

			<p>մտավախությունից ելնելով: 2001 թ. հունիսի առաջին կեսին դիմումատուն վերադարձավ տուն, որտեղ ապրեց մինչև 2002 թ. սեպտեմբերի ձեռքակալումը:</p> <p>2001 թ. հունիսի 12-ին Ազգային ժողովը հայտարարեց ընդհանուր համաներում, որը տարածվեց միայն այն անձանց վրա, որոնք հանցանք էին կատարել մինչև 2001 թ. հունիսի 11-ը և ուժի մեջ էր մինչև 2001 թ. սեպտեմբերի 13-ը:</p>	
--	--	--	--	--